

Սույն վերլուծության մշակմանն աջակցել է Բրիտանական

Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) (www.bewc.org)

ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական բարեփոխումների հարցում

ՏԱՄՄԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի
ՎՃՈՒ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<http://www.legalguide.am>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն ու կարծիքները արվել են «Իրավական ուղեցույց» Հասարակական կազմակերպության անդամ Արա Ղազարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակինը և պարտադիր չէ որ հանրնկեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոնի տեսակետների հետ:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ներածություն

Սույն վերլուծությունը կատարվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ »Դատարան«) կողմից 2001 թվականի փետրվարի 6-ին Տամներն ընդդեմ Էստոնիայի գործով կայացրած վճռի հիման վրա: Գործը վերաբերում է հանրային նախկին գործչին լրագրողի կողմից գրպարտելու և վիրավորանքի գործով փաստերին, որի համար լրագրողը ենթարկվել էր քրեական պատասխանատվության: Դիմումատուն պնդում էր, որ լրագրողին քրեական պատասխանատվության ենթարկելը հանգեցնում է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ »Կոնվենցիա«) 10-րդ հոդվածի: Պատասխանող պետությունը պնդում էր, որ արտահայտվելու ազատությունը բացարձակ իրավունք չէ և որ որոշակի հանգամանքներում և պայմաններում թույլատրվում է միջամտել և սահմանափակել այդ իրավունքը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Էստոնիայի կառավարության հակափաստարկների բազմակողմանի վերլուծությունը: Վերլուծությունը նաև կանդրադառնա Մարու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ »Հանձնաժողով«) և Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում: Գործի ուսումնասիրությունը, մասնավորապես վճռի վերլուծությունը կկատարվի թեստի կիրառման միջոցով, որով Դատարանը առաջնորդվում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումները քննելիս: Վերլուծությունը նաև կանդրադառնա գործի էական համագամանքերին, որոնք նշանակալից դեր են ունեցել և դարձել է կարևոր ուղեցույց Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների մեկնաբանման հարցում:

Սույն վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և մշակվել է հիմնականում իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, ինչպես նաև նրանց ովքեր ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

1. ՏԱՄՍԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Պետության բնութագիրը

Էստոնիան ԵՄ-ին անդամակցելու համար դիմել է 1993 թվականին: ԵՄ Խորհրդարանական վեհաժողովը, հաշվի առնելով, որ Էստոնիայի կառավարությունը մի շարք կարևոր քայլեր է կատարել երկրի ժողովրդավարացման ուղղությամբ, մասնավորապես, որ 1992թ, սեպտեմբերի 20-ին անցկացրել է ժողովրդավարական խորհրդարանական ընտրություններ, որոնք մոնիտորինգի են ենթարկվել Խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի կողմից, նաև այն փաստը, որ 1992թ. հունիսի 28-ին ընդունվել է Սահմանադրություն, որը ամրագրում է իրավունքի գերակայության սկզբունքները, ինչպես նաև, որ կառավարությունը ցանկություն է հայտնել վավերացնելու Եվրոպական կոնվենցիան և ճանաչել Եվրոպական դատարանի պարտադիր իրավագործությունը, իր Կարծիք 170 (1993) – ում առաջարկել է Նախարարների կոմիտեին իր հաջորդ նիստին հրավիրել Էստոնիայի կառավարությանը անդամակցել Եվրոպայի խորհրդին:

Համաձայն Հրաման համ.508-ի՝ Էստոնիան անցավ Խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի տակ, որը պետք է շարունակվեր այնքան, մինչև ամբողջովին կատարել ԵՄ-ի առջև իր ստանձնած պարտավորությունները: Մոնիտորինգի ընթացքում հատկանշվեցին երեք հիմնական խնդիրներ՝ իր պարտականությունները ամբողջովին կատարելու համար: Առաջինը վերաբերվում էր փախստականներին և ապաստանի համար դիմած անձանց կալանավորելու պրակտիկային, որը հակասում էր Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներին՝ այն հիմքով, որ բացակայում էին ապաստանի համար պատշաճ ընթացակարգեր: Երկրորդը վերաբերվում էր “ոչ պատմական» ռուսալեզու փոքրամասնության նկատմամբ վերաբերմունքին, որը որոշ մտահոգությունների տեղիք էր տալիս, հատկապես, ինչ վերաբերվում էր կացության իրավունքի և քաղաքացիության համար դիմումների մերժումներին (ինչպես նաև լեզվական գիտելիքների մասին քննությանը, որը պարտադիր է քաղաքացիության համար դիմած անձանց համար): Երրորդ խնդրահարույց հարցը վերաբերվում էր կալանքի և ձերբակալության պայմաններին:

Ինչևէ, 1997թ. հունվարի 30-ին, հաշվի առնելով, որ Էստոնիան հարգել էր ամենակարևոր պարտավորությունների կատարումը, Վեհաժողովը որոշեց ավարտել մոնիտորինգի ընթացակարգը իր 1117 (1997) Բանաձևով:

1.2. Ընդհանուր սկզբունքները

Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիան երաշխավորում է յուրաքանչյուրի արտահայտվելու ազատության իրավունքը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանությանը կարող են դիմել անհատները, ոչ-կառավարական կազմակերպությունները և մարդկանց խմբերը: Եվրոպական դատարանի նախադեպերը պարզորոշ սահմանում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառելիության կարևորությունը լրագրողների և լրատվամիջոցների վերաբերյալ: Ըստ Դատարանի նախադեպերի՝ տպագիր մամուլը խիստ կարևոր դեր ունի տեղեկատվության մատուցման գործում, ինչպես նաև հանրության կողմից

իրականացնում է «պահապան շան» դերը: Համարվում է, որ լրագրողները իրենց կարևոր ներդրումն ունեն հանրային բանավեճերի հարցում, որով էլ և պայմանավորված է արտահայտվելու և տեղեկատվության ազատության պաշտպանվածության բարձր մակարդակը:

Այդ իմաստով լրատվամիջոցները էական նշանակություն ունեն ժողովրդավարական հասարակության համար: Չնայած մամուլը չի կարող անցնել որոշ սահմաններ, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է այլ անձանց իրավունքներին և հեղինակությանը, այնուամենայնիվ մամուլը պարտականություն ունի տարածել տեղեկություններ և գաղափարներ՝ իր պարտավորություններին և պատասխանատվությանը չհակասող ձևերով՝ հանրային հետաքրքրություն ներակայացնող բոլոր իրադարձությունների վերաբերյալ (տես ի թիվս այլ վճիռների նաև Օբզերվեր և Գարդիան ընդդեմ Միացյալ Թագավորությանը գործով վճիռը, 1991թ. նոյեմբեր 26, շարք A, համ. 216, էջ 29-30, և Բլադետ Տրոմսոն և Ստանսասան ընդդեմ Նորվեգիայի, համ. 2198/093 կետ 59, ՄԻԵԴ 1999-III): Լրագրողական ազատությունը նախատեսում է նաև որոշ չափով չափազանցություն և նույնիսկ սադրանք (*Պրագերն ու Օբերշլիկը ընդդեմ Ավստրիայի, 1995 ապրիլի 26, շարք Ա, համ. 313, էջ 19, կետ 38, և Պրիամա Պրեսը ընդդեմ Ֆրանսիայի, համ. 66910/01 և 71612/01 հուլիս 1, 2003*):

Կոնվենցիայի 8 հոդվածը վերաբերվում է անձնական կյանքի մի շարք իրավունքներին, որոնցից լրատվամիջոցներին վերաբերվում է մասնավոր կյանքի իրավունքը: Անձի մասնավոր կյանքի իրավունքը կարող է հակասության մեջ մտնել լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքի հետ՝ ըստ Կոնվենցիայի 10 հոդվածի: Անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը պետք է հավասարակշռվի Կոնվենցիայի 10 հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքի հետ: Այս համատեքստում Դատարանը սահմանել է, որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության ամենաէական հիմքերից մեկն է: Այդ իրավունքը, որը սահմանափակվում է 10(2) հոդվածով, կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» վրա որոնք մարդկանց կողմից համարվում են անվնաս կամ ոչ վիրավորական կամ որոնց նկատմամբ մարդիկ անտարբեր են, այլ նաև այպիսիք, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստացնում: Այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության և ազատականության պահանջները, առանց որոնց գոյություն չունի «ժողովրդավարական հասարակություն» (տես Հանդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորությանը, 7 դեկտեմբեր 1976թ. շարք Ա, համ. 24, կետ 49):

1.2.1. Զրպարտության քրեական նորմեր

Զրպարտության քրեական նորմերը համարվում են արտահայտվելու ազատության ամենասահմանափակող նորմերը: Բազմաթիվ ոչ-կառավարական կազմակերպություններ ակտիվորեն պայքարում են զրպարտության և վիրավորանքի քրեական նորմերի դեմ: Այդ թվում են Միջազգային համաներում, Արտիկլ 19, Լրագրողների պաշտպանության կոմիտեն, Հելսինկյան ազգային ոչ-կառավարական կոմիտեները, ինչպես օրինակ՝ Բուլղարիայի Հելսինկյան կոմիտեն, Խորվաթիայի Հելսինկյան կոմիտեն, Հունաստանի Հելսինկյան կոմիտեն,

Միջազգային Հելսինկյան կոմիտեն, Համաշխարհային մամուլի ազատության կոմիտեն, Արտահայտվելու ազատության Նորվեգիայի ֆորումը և Լրագրողներ առանց սահմանի կազմակերպությունը: Ավելին, 2000 թվական փետրվարին արտահայտվելու և կարծիք հայտնելու ազատության ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը՝ Լրատվամիջոցների ազատության ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը և Ամերիկյան պետությունների Հատուկ զեկուցողը արտահայտվելու ազատության մասին հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում տրվեցին հետևյալ եզրահանգումները.

- «Արտահայտվելը չպետք է քրեորեն հետապնդվի, եթե այն չի պարունակում վնասի լուրջ վտանգ...սրա օրինակ են հանդիսանում այն օրենքները, որոնք արգելում են կեղծ նորություններ հրապարակել...այդպիսի օրենքները պետք է վերացնել»
- «Զրպարտության քրեական նորմերը պետք է արգելվեն»
- «Զրպարտության քաղաքացիական նորմերը պետք է պարունակեն հետևյալ սկզբունքները՝ հանրային մարմիններին չպետք է իրավունք տրվի զրպարտության հիմքերով հայցեր բերել, ճշմարտությունը պետք է միշտ հանդես գա որպես պաշտպանության հնարավորություն, քաղաքական գործիչները և պետական պաշտոնյաները պետք է քննադատության հանդես մեծ հանդուրժողականություն ցուցաբերեն...»¹

Եվ վերաջապես, ԱՄՆ Պետական դեպարտամենտը Մարդու իրավունքների տարեկան զեկույցում կանոնավոր կերպով տեղեկություններ է տրամադրում այն գործերի վերաբերյալ, որոնցում օգտագործվել են զրպարտության և վիրավորանքի մասին օրենքները:

Եվրոպական դատարանի վճիռները ցույց են տալիս, որ ազատ խոսքի իրավունքի շրջանակները շարունակ լայնանում են, այդ թվում նաև զրպարտության և վիրավորանքի նորմերը: Թեև Դատարանը դեռ երբեք որոշում չի կայացրել, որ զրպարտության կամ վիրավորանքի քրեական նորմերն ինքնին հանդիսանում են Կոնվենցիայի խախտում, սակայն այդ նորմերի կիրառումը առաջացնում է Կոնվենցիայի խախտման իրական վտանգ: 2002 թվականին Ֆրանսիան ստիպված էր Դիմումատուին որպես փոխհատուցում վճարել 4,096.46 եվրո՝ օտարերկրյա ղեկավարին վիրավորելու հիմքով զրպարտության համար քրեական պատաստանատվության ենթարկելու համար (Մարոկկոյի թագավորին):² Նույն

¹ Տես. «Տեղեկատվության ազատության հիմնարար հարցերի և խնդիրների վերաբերյալ հայտարարություն», որն համաձայնեցված է Սանտյագոյի կանոնագրքում: Արտահայտվելու ազատության մասին ԵԱՀԿ հատուկ զեկուցող Ֆրեյմուտ Դյուվ, և Աբիդ Հուսսեյն, Արտահայտվելու և կարծիք հայտնելու ազատության հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող, փետրվար 2000, www.article19.org. Տես նաև «Վիրավորանքի մասին օրենքները. մամուլի ազատությանը ուղղված վիրավորանք» հրապարակվա Մամուլի համաշխարհային ազատության կոմիտեի կողմից. www.wpfc.org

² Կոլումբանին ընդդեմ Ֆրանսիայի (25 հունիս 2002)

տարում Ֆինլանդիայից պահանջվեց Դիմումատուին վճարել 8,400 Եվրո, որի նկատմամբ նույնպես հարուցվել էր քրեական գործ (13 տոկոս հավելավճարով նյութական վնասի դիմաց և 11 տոկոս հավելավճարով ոչ-նյութական վնասի դիմաց):³ Նման զարգացումների արդյունքում, ինչպես նաև քաղաքացիական նորմերը որպես այլընտրանք կիրառելու գիտակցության բարձրացման արդյունքում, նման օրենքները ավելի ու ավելի հաճախ դիտվում են որպես հնացած անցյալի վերապրուկ (անախրոնիզմ): Կաստելսն ընդդեմ Իսպանիայի գործով դատավճռում Դատարանը հայտարարեց.

«Գերիշխող դիրքը, որ գրավում է կառավարությունը, անհրաժեշտ է դարձնում, որպեսզի նա ցուցաբերի զսպվածություն, երբ դրվում է քննադատության համար դատական հետապնդման հարցը, հատկապես, երբ առկա են նրա հակառակորդների կամ զանգվածային լրատվության միջոցների չարդարացված հարձակումներին պատասխանի այլ միջոցներ»⁴

Նույն գործում Դատարանը հայտարարեց, որ քրեական նորմեր չպետք է կիրառվեն այնպիսի դեպքերում, երբ պետությունը հանդես է գալիս որպես «հանրային կարգ ու կանոնի երաշխավոր» և երբ նման միջոցները նպատակ են հետապնդում, որպեսզի «համարժեքորեն, առանց ավելորդ էքսցեզների վերաբերմունք ցույց տալ արատավորող բնույթ կրող անհիմն կամ անբարեխիղճ մեղադրանքներին»⁵: Նշանակալից է այն փաստը, որ տվյալ գործում, որը վերաբերվում էր զրպարտության մեղադրանքով դատապարտելուն, Դատարանը քննում էր այնպիսի միջոցների կիրառման հարցը, որոնք նպատակաուղղված էին հանրային կարգ ու կանոնի և ոչ թե հեղինակության պաշտպանությանը, որի պաշտպանությանն են սովորաբար ուղղված զրպարտության նորմերը:

Հաշվի առնելով, որ շատ երկրներում հեղինակությունը պաշտպանելու միջոցները դեռ մնում են քրեական նորմերը, ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպությունը առաջարկում է ձեռնարկել միջոցներ, որպեսզի գործող քրեական նորմերը համապատասխանեն հետևյալ պայմաններին.

1. Ոչ ոք չպետք է դատապարտվի զրպարտության համար, եթե զրպարտված կողմը չի կարողանում ապացուցել, որ մեղադրանքների մեջ առկա են բոլոր ստորև տրված պայմանները.
2. Չի կարելի անձի արարքը համարել զրպարտություն, քանի դեռ չի ապացուցվել, որ բողոքարկվող հայտարարությունները կեղծ են, որ հայտարարություն անողը ինացել է դրանց կեղծ լինելու մասին, կամ անփութություն է ցուցաբերել դրանց ճշմարտացիությունը պարզելու համար և այդ հայտարարություններն արվել են զուտ այն մտադրությամբ, որպեսզի վնասեն անձի հեղինակությունը.
3. պետական իշխանությունները, այդ թվում նաև ոստիկանությունը և դատախազությունը, պետք է ոչ մի մասնակցություն չունենան զրպարտության

³ Նիկոլան ընդդեմ Ֆինլանդիայի (21 մարտ 2002)

⁴ Կաստելսն ընդդեմ Իսպանիայի (1992) 14 EHR 445, կետ 46

⁵ նույն տեղը

համար քրեական հետապնդումներ նախաձեռնելուն կամ իրագործելուն՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգավիճակ ունի զրպարտված անձը, նույնիսկ եթե նա պետական բարձր պաշտոնյա է.

4. Այնպիսի պատժատեսակներ, ինչպիսիք են բանտարկությունը, բանտարկության կասեցված որոշումները, լրատվության ցանկացած միջոցներով ազատ արտահայտվելու իրավունքի ժամանակավոր կասեցումը, լրագրությամբ կամ ցանկացած այլ մասնագիտությամբ զբաղվելու իրավունքի ժամանակավոր կասեցումը, մեծ տուգանքների նշանակումը և այլ խիստ քրեական պատիժներ երբեք չպետք է կիրառվեն զրպարտության համար՝ անկախ այն հանգամանքից, թե որքան բացեիբաց են կատարվել զրպարտող բնույթի հայտարարությունները:

Այսպիսով, ներկա զարգացումների պայմաններում զրպարտության քրեական նորմերը՝ հատկապես բանտարկությունը, համարվում են անհամատեղելի Կոնվենցիայի և միջազգային նորմերի հետ և դրանց կիրառումը համարվում է ազատ արտահայտվելու իրավունքի խախտում: Ինչպես նշվել է Ազատ խոսքի հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Պրն. Դյուվի կողմից ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանին ուղղված իր նամակում, որը վերաբերվում էր նոր ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի զրպարտության նորմերին՝

«Ջրպարտության և այսպես կոչված վիրավորանքի քրեական նորմերի գոյությունը ԵԱՀԿ բազմաթիվ անդամ երկրների ներպետական օրենսդրության մեջ խոչընդոտում է լրատվամիջոցների աշխատանքին, որոնք անհարկի ճնշում են գործադրում այլ լրագրողների վրա, որոնք հետաքննում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կոռուպցիային, հատկապես երբ այն ընդգրկում է պետական պաշտոնյաներին: Ջրպարտության քրեական նորմերը հաճախ նաև օգտագործվում են բարձրաստիճան քաղաքացիական ծառայողներին և քաղաքական գործիչներին քննադատությունից պաշտպանելու համար»⁶.

Զնայած ճիշտ է, որ նախկին խորհրդային հանրապետություններից շատերը դեռ չեն վերացրել կոմունիստական դարաշրջանի զրպարտության և քրեական նորմերը: Կենտրոնական Եվրոպայում, որտեղ ժողովրդական բարեփոխումներն ավելի արդյունավետ են, զրպարտության և վիրավորանքի քրեական նորմերի վերացման գործընթացն ավելի առաջ է գնացել: Այս գործընթացը շարունակում է զարգանալ մեկ ուղղությամբ. զրպարտության քրեական նորմերը ամբողջովին կամ մասամբ հանվել են կամ համարվել առ ոչինչ, ինչպես օրինակ՝ Բոսնիա - Հերցեգովինայում, Չեխիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Սլովակիայում: 2003 թվականի մայիսին Ռումինիայի կառավարությունը առաջարկեց նոր քրեական օրենսգրքի նախագիծ, որտեղ մեծ մասամբ հանվել էին քրեական զրպարտության նորմերը՝ կամ ծայրահեղ դեպքում, զգալիորեն բարելավվել: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԵՄ-ին վաղուց անդամակցած Գերմանիան, արդեն «չեզոքացրել» են իրենց զրպարտության քրեական նորմերը Դատարանի նախադեպերով:

⁶ Ֆրեյմուտ Դյուվի պաշտոնական նամակը ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանին թվագրված 2 հուլիսի 2003թ.

1.2.2. Հանրային շահ և հանրային բանավեճի ազատություն

Տեղեկություններին և գաղափարներին առանձնապես բարձր կարգի պաշտպանություն է տրվում, եթե դրանք վերաբերվում են հանրային բանավեճին: Հանրային խոսքը լայն պաշտպանվածության տակ է գտնվում: Զրպարտության կամ վիրավորանքի վերաբերյալ գործերով որոշումներ ընդունելիս մեծ նշանակություն ունի, թե արդյոք լրագրողի պատրաստած լրատվությունը նպատակ էր հետանդում հանրային բանավեճ հրահրել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Օրինակ, Թորգեր Թորգերսոնի գործում լրագրողը դատապարտվել էր ոստիկանությանը զրպարտելու մեղադրանքով, քանի որ նա պատրաստել էր մի հոդված, որում քննադատության էր ենթարկել ոստիկանությանը և հետաքննել էր քաղաքային ոստիկանության կողմից բռնի ուժ կիրառելու մի շարք դեպքեր: Հոդվածը գրված էր խիստ քննադատական ոճով և օգտագործվել էր սուր լեզվառճ, որոնք իրականում կարող էին վիրավորական լինել ոստիկանության համար: Սակայն, Դատարանը նկատեց, որ լրագրողը հոդվածով նպատակ էր հետանդում, և վերջինս կարողացավ ապացույց ներկայացնել, որ հոդվածի նպատակն էր ոչ թե Ռեյկյավիկի ոստիկանությանը զրպարտելը, այլ Արդարադատության նախարարին դրդելը, որպեսզի վերջինս անկախ և անկողմնակալ մի մարմին ստեղծեր ոստիկանական բռնի գործողությունների առնչությամբ ստացվող բողոքները քննելու ուղղությամբ: Հաշվի առնելով հոդվածի վերջնական նպատակը՝ Դատարանը հայտարարեց, որ օգտագործված լեզվական ոճը չէր կարելի համարել չափից ավելի ծայրահեղ: Ի վերջո Դատարանը որոշեց, որ լրագրողին դատապարտելը և բանտարկելը իրավամբ կարող էին հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի շուրջ բաց քննարկումներ առաջացնելուն խոչընդոտ հանդիսանալ:

«Հոդվածները վերաբերվում էին հասարակության կողմից ծայրահեղ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի...և հաշվի առնելով հոդվածների վերջնական նպատակը և այն հնարավոր ազդեցությունը, որ կարող էին ունենալ, Դատարանը որոշեց, որ օգտագործված լեզվական ոճը չափազանցված չէ» (կետ 67)

1.2.3. Թույլատրելի քննադատության սահմանները

Եվրոպական դատարանը իր բազմաթիվ վճիռներում տարբերակում է անցկացրել հանրային և մասնավոր հեղինակությունների միջև և որոշել, որ հանրային դեմքերի համար քննադատությունից պաշտպանվելու սահմաններն ավելի նեղ են, հատկապես, երբ լրագրողը հոդված է գրում հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի մասին: Արդյունքում, քաղաքական գործիչների և պետական բարձր պաշտոնյաների նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի լայն են, քանի սովորական քաղաքացիների: Ըստ Օբերշլիկի գործով դատավճռի՝ «քաղաքական գործիչը նույնպես իրավունք ուն պաշտպանել իր հեղինակությունը, նույնիսկ երբ նրանք հանդես են գալիս ոչ որպես անհատ, սակայն նման դեպքերում այդօրինակ պաշտպանության հակակշիռ է հանդես գալիս քաղաքական հարցերի շուրջ բաց բանավեճի նկատմամբ հանրության

հետաքրքրությունը»:⁷ Լինգենսի գործով դատավճռում Դատարանը բացատրեց, թե ինչու թույլատրելի քննադատության սահմանները ավելի լայն են քաղաքական գործիչների և հանրային դեմքերի, քան սովորական քաղաքացիների նկատմամբ: Ըստ Դատարանի,

«...քաղաքական գործիչը կանովին իր յուրաքանչյուր խոսքը և գործողություն ի ցույց է դնում լրագրողների և ողջ հանրության ուշադրությանը և հետևաբար, նա պետք է ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերի...»:⁸

Այսպիսով, այն դեպքերում, երբ քաղաքական գործիչը կամ հայտնի հանրային գործիչը վիճարկում են լրատվամիջոցների կողմից իրենց վիրավորելը կամ զրպարտելը, Դատարանը հաշվի է առնում ոչ միայն նրանց նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակները, այլ նաև, թե ինչ աստիճանի է վիճահարույց հոդվածը նպաստում հանրային բաց բանավեճին, ինչպես նաև հանրային հետաքրքրության աստիճանը վիճահարույց հարցի վերաբերյալ:

1.2.4. Փաստեր և գնահատական - դատողություն

Կոնվենցիայի 10 հոդվածը պաշտպանում է ոչ միայն գաղափարները, այլ նաև կարծիքը: Պաշտպանվում են ոչ միայն քաղաքական խոսքը կամ փիլիսոփայական մտքերը, այլև գնահատող դատողությունը: Ըստ Դատարանի, (տես Լինգենսի գործը դատավճիռը, կետ 46) Պետք է հանգամանորեն տարբերակում անցկացնել փաստերի և գնահատող դատողությունների միջև: Փաստերի գոյությունը կարող է լինել ապացուցելի այն դեպքում, երբ գնահատող դատողությունների ճշմարտացիությունը ոչ միշտ է ենթակա ապացուցման: Սրանով կարծիքն ու գնահատող դատողությունը ստանում են մեծ պաշտպանվածություն 10 հոդվածով: Սակայն, կարծիք հայտնելու իրավունքը նույապես բացարձակ չէ: Երբ վիճահարույց գնահատող դատողությունը արվել է առանց փաստացի հիմքերի, Դատարանը կարող է պաշտպանության տակ չառնել նման խոսքը և համարել դա գնահատող դատողության շրջանակներից դուրս: Այս իմաստով Դատարանը սովորաբար հղում է «ողջամտորեն կատարված սկզբունքին», որը լրագրողի պաշտպանության ձևերից մեկն է իրավախախտում առաջացնելուց խուսափելու համար:

1.2.5. Ողջամտորեն կատարված լրատվություն

Լայնորեն ընդունված է, որ որոշակի հանգամանքներում անհրաժեշտ է պաշտպանել նույնիսկ կեղծ և զրպարտող հայտարարությունները: Բոլոր կեղծ հայտարարությունների համար խիստ պատասխանատվության ենթարկելը հատկապես անարդարացի է լրատվամիջոցների և լրագրողների դեպքում, որոնց վրա դրված է պարտականություն հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ բավարարել հանրության տեղեկատվություն ստանալու պահանջը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկատվությունը այնքան կարևոր է,

⁷ Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի, ՄԻԵԴ 23 մայիս 1991: Տես նաև Օբերշլիկ (2) ՄԻԵԴ 1 հուլիս 1997:

⁸ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (1986) 8 EHR 407, կետ 42

որ ժամանակ չի տրվում ստուգելու բոլոր փաստերի ճշմարտացիությունը մինչև տեղեկատվության հրապարակումը կամ հեռարձակումը: Նույնիսկ ամենալավ լրագրողները իրենց կամքից անկախ կարող են սխալվել և թույլ տալ նրանց պատասխանատվության ենթարկել ցանկացած կեղծ տեղեկության մեղադրանքով կնշանակի խոչընդոտել հանրության՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի մասին ժամանակին տեղեկատվություն ստանալու իրավունքին: Այդ պատճառով Դատարանը ավելի հավասարակշռված մոտեցում է ցուցաբերում տեղեկատվություն ստանալու իրավունքի և հեղինակության պաշտպանության իրավունքի միջև, ընդդեմ այն անձանց, ովքեր գործել են ողջամտորեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություն տրամադրելիս: Կոլումբանիի գործով Դատարանը սահմանել է, որ «ողջամտորեն արված լրատվություն» սկզբունքը նշանակում է այնպիսի լրատվություն, որը կատարվել է բարեխղճորեն և լրագրողական վարքագծի նորմերի համաձայն:

1.2.6. Լրատվամիջոցների հատուկ կարգավիճակը

Ինչպես նշվեց, լրագրողները և լրատվամիջոցները գտնվում են 10 հոդվածի հատուկ պաշտպանվածության տակ: Սա հստակ երևում է Դատարանի վերջին շրջանի վճիռներից: Շատ հաճախ, երբ լրատվությունը վերաբերվում է հանրային կամ քաղաքական գործչի խիստ քննադատությանը, Դատարանը որոշում է կայացնում լրագրողի կամ լրատվամիջոցի օգտին: Ինչպես սահմանվել է Դատարանի կողմից, «մամուլը էական դեր է խաղում ժողովրդավարական հասարակարգում...այն ունի տեղեկություններ տրամադրելու պարտականություն՝ իր պարտավորությունների և պատասխանատվության համապատասխան հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր երևույթների վերաբերյալ: Այս հիմնավորումը լրագրողների առնչությամբ ներկայացվող զրպարտության գործերում պետական իշխանությունների միջամտության անհրաժեշտությունը գնահատելու ամենահիմնական սկզբունքն է: Ինչպես նշվեց Օբերշլիկի գործում, արտահայտվելու ազատությունը պաշտպանում է նաև հանրության մի մասին կամ պետությանը ցնցող, անհանգստացնող տեղեկություններով: Եվ վերջապես, Դատարանը նաև նշել է, որ ոչ միայն լրագրողները պարտականություն ունեն հանրությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող լրատվություն հաղորդել, այլ նաև հանրությունը իրավունք ունի քաղաքական հարցերի և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ ստանալ: Ըստ Դատարանի, լրագրողական նյութի վրա դրվող սահմանափակումները պետք է հակակշռվեն քաղաքական հարցերի շուրջ բաց քննարկումների անհրաժեշտության հետ, ուստի, արտահայտվելու ազատության բացառությունները պետք է նեղ մեկնաբանվեն:

«Նեղ մեկնաբանության» սկզբունքը հստակորեն բացատրվում է Սանդի Թայմսի գործով դատավճռում: Համաձայն Դատարանի, բավարար չէ, որպեսզի միջամտությունը կատարվի 10-րդ հոդվածի երկրորդ մասում տրված հիմքերից որևէ մեկով: Բավարար չէ նաև, որպեսզի միջամտության տեղի ունենալու համար իրավական դրույթի բովանդակությունը գտնվի իրավական նորմի դիսպոզիցիայի շրջանակներում, որը կազմված է լայն և բացարձակ իրավական տերմիններով:

Դատարանը պետք է համոզվի, որ միջամտությունը անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով գործի բոլոր փաստերը և առանձնահատկությունները: Ստացվում է, որ բացառությունները «նեղ սահմանելու» պահանջի նպատակը պահանջում է, որպեսզի պետությունը ձեռնպահ մնա կամայականություններից իր գործողություններում՝ որոշումներում լայն մեկնաբանելով Կոնվենցիայի 10-րդ հոդված երկրորդ կետում նշված իրավաչափ նպատակները:

1.3. Կոնվենցիայի 10 հոդվածը

Կոնվենցիայի 10 հոդվածի տարբերությունը ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխությունից տարբերվում է նրանով, որ այն հստակ տրամադրում է ազատ արտահայտվելու ազատության սահմանափակումները: Այս իմաստով, Առաջին փոփոխությունը արտահայտվելու ազատության իրավունքը տալիս է բացարձակ կերպով. «Կոնգրեսը չպետք է ընդունի որևէ օրենք...որը արգելում է այդ իրավունքի ազատ իրականացումը, կամ որևէ կերպ սահմանափակում է արտահայտվելու ազատությունը...»: Իսկ Կոնվենցիայի 10 հոդվածը, ի տարբերություն Առաջին փոփոխությանը, տրամադրում է կոնկրետ չափանիշներ և ուղեցույց ազատ խոսքի իրավունքը իրագործելու և այդ իրավունքը դրա հետ բախվող այլ իրավունքների հետ հավասարակշռելու համար:

Ինչպես նշվեց վերևում, այս հոդվածը տեղեկություններ տրամադրելու և ստանալու իրավունքը տրամադրում է «յուրաքանչյուրին»՝ անհատներին, ոչ-կառավարական կազմակերպություններին և մարդկանց խմբերին, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին: Չնայած հոդվածի առաջին մասում բառացիորեն նշված չէ «փնտրել» բառը, սակայն իր դատավճիռներով Դատարանը սահմանել է, որ տեղեկատվություն փնտրելու, այսինքն տեղեկատվության հասանելիության իրավունքը նույնպես ընդգրկված է հոդվածով տրամադրվող իրավունքների մեջ:⁹

Հոդվածի երկրորդ մասը ամրագրում է, որ քանի որ տեղեկատվության և արտահայտվելու ազատության իրավունքի կիրառումը պայմանավորված է պարտականություններով և պատասխանատվությամբ, ապա նշված իրավունքները կարող են սահմանափակվել հանրային իշխանությունների ինչ-ինչ միջամտությունների տեսքով: «Ձևականությունները», «պայմանները» «սահմանափակումները» և «պատիժները» կարող են միայն համարվել իրավաչափ, եթե դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 10 հոդվածի երկրորդ մասով տրված բացառություններին: Բացառությունների ցուցակը սպառիչ է:

Ըստ Կոնվենցիայի 10 հոդվածի, սահմանափակումները պետք է ենթարկվեն երեք մասից բաղկացած չափանիշների: Չափանիշները կիրառվում են գումարման հիմքով, այսինքն, եթե երեք պայմաններից առնվազն մեկը խախտված է, ապա

⁹ Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորությանը (1990) 12 EHRR 36

ներպետական մարմինների կողմից օգտագործված սահմանափակող միջոցը կհամարվի Կոնվենցիայի 10 հոդվածի խախտում:

Առաջին, միջամտությունը պետք է կատարված լինի «օրենքով սահմանված կարգով»: Դա նշանակում է, որ ցանկացած սահմանափակում (գործողություն) կամ սահմանափակող նորմ (օրենսդրություն) պետք է համապատասխանի «պարզորոշության» և «հասանելիության» չափորոշիչներին: Նշված սկզբունքները հաստատվել են Սանդի Թայմսի գործով վճռում, ըստ որի՝ 1.օրենքը պետք է հասանելի լինի քաղաքացիներին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան պատճառ կերպով հղում կատարել օրենքի այդ դրույթներին, որոնք կիրառելի են տվյալ գործի վերաբերյալ: 2.ցանկացած սահմանափակող նորմ պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացիները հնարավորություն ունենան և նույնիսկ, անհրաժեշտության դեպքում, խորհրդատվությունից օգտվելով, կանխորոշել իրենց գործողությունների առաջացրած հետևանքները պատասխանատվությունից խուսափելու համար: Ոչ միայն կողիֆիկացված նորմերը, այլև ընդհանուր կամ սովորույթային իրավունքի ընդհանուր նորմերը կարող են բավարար իրավական հիմքեր համարվել: Ջուտ այն փաստը, որ օրենսդրական դրույթը առաջացնում է մեկնաբանության անհրաժեշտություն չի նշանակում, որ դրույթը անորոշ է և ոչ ճշգրիտ, որպեսզի համարվի, որ չի համապատասխանում «օրենքի որակ» հասկացությանը: Սակայն, եթե օրենսդրական ակտը օրենքի կիրառման համար ոչ մի չափանիշ չի պարունակում, ապա սահմանափակումը չի համարվի օրենքով սահմանված կարգով՝ Կոնվենցիայի 10 հոդվածի իմաստի շրջանակներում:

Երկրորդ, ցանկացած սահմանափակում պետք է հետևի Կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասում տրված իրավաչափ նպատակներից առնվազն մեկը, որոնք հետյալն են՝

- պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և հասարակական անվտանգությունը պաշտպանելը
- անկարգությունները կամ հանցագործությունները կանխելը
- առողջությանը կամ բարոյականությունը պաշտպանելը
- այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելը
- խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելը
- արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելը:

Ըստ Դատարանի նախկին վճիռների՝ նշված իրավաչափ նպատակներից ոմանք կարելի է լայն մեկնաբանել: Օրինակ՝ «այլ անձանց իրավունքներ» հասկացության տակ կարելի է հղում կատարել մասնավոր կյանքի իրավունքին՝ ըստ Կոնվենցիայի 8 հոդվածի: Կամ «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու» իրավաչափ նպատակի տակ կարելի է հղում կատարել 6 հոդվածի նորմերին, օրինակ՝ դատական գործերի լուսաբանումը

լրագրողների կամ լրատվամիջոցների կողմից: Ներպետական մարմինների կողմից ցանկացած այլ պատճառներ որպես իրավաչափ նպատակ ներկայացնելը առաջացնում է Կոնվենցիայի խախտում:

Երրորդ, ցանկացած միջամտություն պետք է «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակարգում»: Այս արտահայտությունը կամ, ինչպես ասում են, «անհրաժեշտության թեսթը» ըստ Դատարանի մեկնաբանության նշանակում է, որ միջամտությունը համարվում է անհրաժեշտ, եթե 1) միջամտության համար առկա է «սոցիալական սուր պահանջ», 2) ներպետական մարմինների կողմից սահմանափակման համար կիրառված միջոցները (քրեական/քաղաքացիական վարույթի հարուցում, արգելանք տակ պահելը, վարչական տուգանք և այլն) համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ, 3) միջամտությունը «նպատակահարմար է» և «արդարացված»: Պրակտիկայում անհրաժեշտության թեսթը ամենադժվար հաղթահարելին է՝ հատկապես պատասխանող կառավարության համար: «Անհրաժեշտության» թեսթը չի կարելի կիրառել բացարձակ կերպով: Ավելին, այն կախված է բազմաթիվ գործոններից, ինչպես օրինակ՝ վիճարկելի սահմանափակման բնույթը, աստիճանը, վիճարկելի հայտարարության քաղաքական համատեքստը, գործում ներգրավված անձինք և այլն: Ուստի, ինչպես նշել է Դատարանը բազմաթիվ անգամ, դատավճիռը երբեք չի կայացվում վերացական կերպով, այլ յուրաքանչյուր անգամ տվյալ գործի փաստերից և առանձնահատկություններից ելնելով: Այսպիսով, Դատարանը ներպետական մարմինների կողմից 10 հոդվածի կիրառումը վերահսկում է՝ զգուշորեն օգտագործելով այս չափանիշը և գնահատելով վիճարկվող սահմանափակումների նպատակահարմարությունը և համաչափությունը:

Համաչափությունը քննելիս Դատարանը հաշվի է առնում, թե միջամտության աստիճանը ինչ հետևանքներ է թողնում դիմումատուի արտահայտվելու ազատության վրա: Եթե սահմանափակումը զուտ կարճատև հետևանք է թողնում, կամ, եթե առկա են բավարար չափի կամ քանակի այլընտրանքային տարբերակներ տեղեկատվություն ստանալու կամ տարածելու, կամ հանրային բաց բանավեճին մասնակցելու համար, նման հանգամանքները ուշադրության են արժանանում Դատարանի կողմից:

1.4. Հայեցողության իրավունք

Միջազգային իրավունքի տեսանկյունից Եվրոպական դատարանը ստորադաս է ազգային դատարանին փաստերի և ապացույցների գնահատման հարցում: Առաջին հերթին ազգային իշխանությունների պարտականությունն է որոշել, արդյոք տվյալ սահմանափակումը խախտում է Կոնվենցիան, թե ոչ, կամ արդյոք տվյալ սահմանափակումը «անհրաժեշտ է», «համաչափ է», կամ արդյոք դրա համար կա «սոցիալական սուր պահանջի առկայություն», թե ոչ: Եվրոպական դատարանը իրացնում է միայն իր վերահսկողության ֆունկցիան պարզելու համար, արդյոք սահմանափակումը համարվում է Կոնվենցիայի խախտում: Սա կատարելիս Դատարանը միշտ խուսափել է փաստերի և ապացույցների մասին իր

գնահատականը փոխարինել փաստերին և ապացույցներին տված ներպետական դատարանի գնահատականով: Ավելին, Դատարանը ներպետական դատարանին «գործելու ազատություն» է տալիս, քանի որ կարծում է, որ ազգային իշխանությունները ավելի նպաստավոր իրավիճակում են գտնվում, քան միջազգային դատարանը: Այսինքն, Դատարանը ներպետական դատարաններին տալիս է փաստերի և ապացույցների գնահատման, իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը որոշելու «հայեցողության իրավունք»: Ինչպես նշվում է Հանդիսայրի գործով դատավճռում.

«...պետական իշխանությունների դիրքը ավելի նպաստավոր է, քանզի միջազգային ատյանի դատավորինը «սահմանափակման» «անհրաժեշտության» մասին...կարծիք կազմելու համար...ազգային իշխանությունների վրա է դրված սոցալական սուր պահանջի առկայության անհրաժեշտության վերաբերյալ առաջնային գնահատական տալու խնդիրը...այսպիսով, ներքին հայեցողության ոլորտը եվրոպական վերահսկողության հետ ընթանում է ձեռք-ձեռքի, որը ներառում է ինչպես որոշման հիմքում ընկած օրենքը, այնպես էլ բուն որոշումը»:¹⁰

Եթե Դատարանի վերահսկողության գործառույթը և ազգային դատարանին տրվող հայեցողության իրավունքը «ընթանում են ձեռք-ձեռքի տված», ապա պետք է նշել, որ դատարանի վերահսկողության ոլորտը մեծ է այնպիսի գործերում, որտեղ փաստերը վերաբերվում են լրատվամիջոցների և լրագրողների ազատ խոսքի իրավունքի սահմանափակմանը, հատկապես, երբ լրատվական նյութը ներկայացնում է հասարակական մեծ հետաքրքրություն:

1.5. Գործի փաստերի և փաստարկների վերլուծությունը

Դատարանը գործի վերաբերյալ փաստերի և փաստարկների վերլուծությունը կատարել է՝ հիմնվելով վերը նշված երեք մասից բաղկացած թեսթը կիրառելու միջոցով: Մասնավորապես, արդյոք քրեական վարույթի հարուցումը Դիմումատուի նկատմամբ և տուգանքի նշանակումը կատարվել են էստոնիայի ներպետական օրենսդրության սահմանված կարգով, արդյոք քրեական գործի հարուցումը և կիրառված տուգանքը հետապնդում էին Կոնվենցիայի 10(2) հոդվածի իրավաչափ նպատակներից առնվազն մեկը և արդյոք լրագրողի արտահայտվելու ազատության վրա դրված նշված սահմանափակումները «անհրաժեշտ էին ժողովրդավարական հասարակությունում», մասնավորապես՝ արդյոք կար «սոցիալական սուր պահանջի առկայություն» պրն. Տամներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, արդյոք քրեական պատասխանատվությունը «համաչափ» միջոց է նշված իրավաչափ նպատակին հասնելու համար և արդյոք տուգանքը «նպատակահարմար» և «բավարար» միջոց էր:

Հարկ է նշել, որ Դատարանի եզրակացությունների և կողմերի փաստարկների գնահատումը կատարվել է ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության մշակած և 2002թ.

¹⁰ Հանդիսայրն ընդդեմ Միացյալ Թագավորությանը, կետ 47

հովիսին հրապարակած «Ջրպարտության սահմանումը. արտահայտվելու ազատության և հեղինակության պաշտպանության սկզբունքները» ուսումնասիրության մեջ նշված սկզբունքների հիման վրա: Այս սկզբունքները մշակվել են հիմնականում հիմք ընդունելով ԵԽ անդամ երկրների ներպետական նորմերը, ինչպես նաև Դատարանի և միջազգային կազմակերպությունների, ինչպես օրինակ ՄԱԿ-ի, ԵԽ-ի և ԵԱՀԿ-ի կողմից մշակված սկզբունքները:

1.5.1. Օրենքով սահմանված կարգով

Ինչպես նշվեց վերևում, նշված սկզբունքը պահանջում է երկու գործոնների առկայություն, որպեսզի իրավական նորմը լինի հասանելի և այն ձևակերպված լինի բավարար չափով պարզորոշ, որպեսզի քաղաքացիները հնարավորություն ունենան կանխորոշել իրենց արարքները պատասխանատվությունից խուսափելու համար: Նշված երկու չափանիշները միասին կազմում են «օրենքի որակ» հասկացությունը: Դիմումատուն այս գործում նշում էր, որ Քրեական դատավարական օրենսգրքի 130 հոդվածը ձևակերպված էր լայն և անորոշ տերմիններով և լրագրողներին հնարավորություն չէր տալիս հնարավորության սահմաններում կանխորոշել, թե արդյոք այս կամ այն հոդվածը կարող էր առաջացնել իրավախախտում: Կառավարությունը առարկում էր՝ պնդելով հակառակը, մասնավորապես, որ հոդվածի բովանդակությունը բավականաչափ պարզ էր, որպեսզի Դիմումատուն հասկանար, որ հարցազրույցի ընթացքում իր կողմից օգտագործված երկու վիճահարույց բառերը կարող էին համարվել վիրավորանք և զրպարտություն: Կարևոր է նշել, որ Էստոնիայի Գերագույն դատարանը այս հարցին արդեն պատասխանել էր նշելով, որ «անպատշաճ բնույթի» արտահայտությունը, որը նշված է քրդատի 130 հոդվածում, «ընդգրկում է ոչ միայն գրեհիկ և անպարկեշտ բառերի գործածություն, այլ նաև բացասական իմաստ արտահայտող և զրպարտող արտահայտչական արտահայտություններ»: Ավելին, Գերագույն դատարանը որոշել էր, որ տերմինը կարող է ընդգրկել նաև «ոչ-բառացի» գործողություններ, օրինակ՝ ծաղրանկար: Հիմնվելով ներպետական փորձագիտական եզրակացության և առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանի եզրակացության վրա՝ Գերագույն դատարանը որոշել էր, որ նշված երկու բառերը իսկապես զրպարտող բնույթի էին, ուստի դրանք համարվում էին «անպատշաճ բնույթի» արտահայտություններ: Այսպիսով, ըստ ներպետական դատարանների, թեև «անպատշաճ բնույթի» արտահայտությունը ընդանուր բնույթի էր, սակայն Էստոնիայի հասարակության յուրաքանչյուր անդամ, ելնելով բառերի իմաստից, ողջամտության սահմաններում կարող էր դրանք համարել զրպարտող և վիրավորական: Այդ պատճառով կարելի էր ասել, որ Դիմումատուն ի վիճակի էր կանխորոշել և ըստ դրա կարգավորել իր գործողությունները այնպես, որպեսզի խուսափեր «անպարկեշտ բնույթի» արտահայտություններ օգտագործելուց և դրա արդյունքում օրենքը խախտելուց:

Դատարանը այս հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս հիմնվեց պետություններին տրվող «հայեցողության ոլորտի» սկզբունքից, որի վերաբերյալ նշվում է վերևում: Դատարանը գտավ, որ Քրեական դատավարության 130 հոդվածը իրավամբ ձևակերպված էր լայն արտահայտություններով: Բավական էր ասել, որ

հողվածի ամբողջ տեքստը կազմված էր մեկ նախադասությունից: Սակայն, Ղատարանը այն կարծիքին էր, որ չէր կարելի համարել, թե 130 հողվածը չէր համապատասխանում «օրենքի որակ» հասկացությանը: Այնուհետև Ղատարանը, օգտագործելով պետություններին տրվող հայեցողության ոլորտը, որոշեց այս հարցը թողնել պատասխանող պետության վրա, որպեսզի վերջինս որոշի ներպետական դրույթների մեկնաբանության և կիրառության հարցը: Այս իմաստով Ղատարանը ներպետական դատարաններին տվեց հայեցողության լայն ոլորտ և, համապատասխանաբար, նեղացրեց Եվրոպական դատարանի վերահսկողության շրջանակները:

Ընդհանուր առմամբ, Ղատարանը բացարձակ մոտեցում չի ցուցաբերում «օրենքով սահմանված կարգով» սկզբունքին: Առաջին՝ խոսելով այն մասին, թե արդյոք քաղաքացին կարող էր կանխորոշել իր գործողությունները օրենքի այս կամ այն դրույթի իմաստից ելնելով՝ Ղատարանը նաև նշում է, որ նման հնարավորություն չլինելու դեպքում քաղաքացին կարող է օգտվել անհրաժեշտ խորհրդատվությունից: Այսինքն, դեռ բավարար չէ զուտ ցուղադրել, որ իրավական նորմը պարզորոշ ձևակերպված չէ: Անհրաժեշտ է նաև Ղատարանին համոզել, որ նույնիսկ նման խորհրդատվությունից օգտվելու դեպքում հնարավոր չէր լինի ողջամտության սահմաններում կանխորոշել, թե արդյոք այս կամ այն գործողությունը կարող էր հանգեցնել պատասխանատվության: Ավելին, ըստ Ղատարանի, չի պահանջվում, որպեսզի իրավական նորմը ձևակերպված լինի այնպես, որպեսզի հնարավորություն տա բացարձակ ճշգրտությամբ որոշել, թե արդյոք այս կամ այն գործողության վրա կարող է տարածվել տվյալ նորմը: «Օրենքով սահմանված կարգով» արտահայտության մեկնաբանությունից պարզվում է, որ Ղատարանը ընդունում է այն գաղափարը, ըստ որի իրավական նորմերը երբեմն կարող են արտահայտված լինել «ավելորդ քարացածությամբ», որպեսզի հնարավորություն ունենան «փոփոխվող հանգամանքների հետ համընթաց քայլել»: Ինչևէ, Ղատարանի արտահայտած հիմնական միտքը կայանում է նրանում, որ իրավական նորմերը պետք է ձևակերպված լինեն այնպես, որպեսզի բացառվի կամայականությունների դրսևորումը: Եթե նորմը չի պարունակում օրենքը կիրառելու չափանիշ, կամ եթե արտահայտվելու ազատություն սահմանափակումները չեն առաջարկում կամայականությունից պաշտպանվելու նվազագույն աստիճան, որը պահանջվում է իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ապա նման կարգի սահմանափակումը չի կարող համարվել «օրենքով սահմանված կարգով»:

Նկատի ունենալով վերը նշվածը՝ Ղատարանը կարծես թե ընդունում է կառավարության տեսակետը այն մասին, որ թեև 130 հողվածի բովանդակությունը կարճ է, իսկ տեքստը կազմված է ընդհանուր տերմիններով, այն այնուամենայնիվ պարունակում է որոշակի չափանիշներ՝ «անպատշաճ բնույթ» արտահայտությունը, որը տրամադրում է կամայականությունից պաշտպանվելու նվազագույն աստիճանի հնարավորություն, ինչպես նաև քաղաքացիների, այդ թվում նաև, լրագրողների համար կատարում է բավարար չափով ուղեցույցի դեր՝ զրպարտող բնույթի և վիրավորական հայտարարություններից խուսափելու համար: Հաշվի առնելով այս հանգամանքը և տվյալ գործի փաստերից ելնելով՝ Ղատարանը որոշեց, որ

Դիմումատուն կարող էր ողջամտության սահմաններում կանխորոշել, որ *'rongaema'* և *'abielulihkuja'* բառերի օգտագործումը կարող էր ստորացնել տկն. Լաանարուի արժանապատվությունը «անպարկեշտ կերպով», որն էլ հանդիսանում է Քրեական դատավարական օրենսգրքի 130 հոդվածի անհրաժեշտ տարրը:

1.5.2. Իրավաչափ նպատակը

Կոնվենցիան պետությունների վրա դնում է դրական պարտավորություն, որպեսզի ապահովվի անձնական կյանքի իրավունքը պաշտպանելու համար արդյունավետ միջոցների կիրառումը: Դատարանը նշել է, որ դրական պարտավորությունների սահմանը տարածվում է այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի անհրաժեշտ գործողություններ կատարվեն անձին մեկ այլ մասնավոր անձի ապօրինի գործողություններից պաշտպանելու համար: X և Y ընդդեմ Նիդեռլանդների գործով դատավճռում Դատարանը հայտարարեց, որ թեև 8-րդ հոդվածը նպատակ է հետապնդում անձին պաշտպանել պետական մարմինների անհարկի միջամտություններից, սակայն այն չի պարտադրում իշխանություններին ձեռնպահ մնալ նման միջամտություններից: Բացի այս արգելող պարտականությունից, հոդվածը նաև նախատեսում է, որպեսզի պետությունները դրսևորեն նաև դրական պարտավորություններ անձնական կյանքի իրավունքը պաշտպանելու համար: Նման պարտավորություններ են համարվում այնպիսի միջոցների կիրառումը, որոնք նպատակ են հետապնդում անձնական կյանքի պաշտպանությունը տարբեր անձանց միջև փոխհարաբերություններում:

Այս սկզբունքին հետևելով՝ Կառավարությունը պնդում էր, որ քրեական հետապնդում հարուցելով պետությունը նպատակ էր հետապնդում պաշպանել տկն. Լաանարուի «հեղինակությունը և իրավունքները»: Քրեական դատավարական օրենսգրքի 130 հոդվածի բովանդակությունը պարզորոշ ցույց է տալիս, որ գործի հարուցումը պայմանավորված էր ոչ թե հանրային բանավեճի կանխումով, այլ հեղինակության պաշտպանությամբ: Այս իմաստով պատասխանող պետությունը հետևում էր ԱՐՏԻԿԼ 19-ի երկրորդ սկզբունքին, որը նշում է, որ զրպարտության նորմերը չեն կարող արդարացված լինել, եթե դրանք նպատակ չեն հետապնդում և վերջնական հետևանքը չի համարվում անձի արժանապատվության պաշտպանությունը և դատելու և դատվելու հնարավորություն ստեղծելը վնասի հետևանքները փոխհատուցելու նպատակով: Նշված սկզբունքը նշում է նաև, որ զրպարտության նորմերը չեն կարող արդարացված լինել նաև, եթե դրանք նպատակ են հետապնդում և դրանց հետևանք է հանդիսանում պաշտոնյաների նկատմամբ քննադատությունը և կոռուպցիայի կամ պաշտոնական պարտականությունների մեջ թերանալու փաստերի մասին տեղեկատվության հաղորդումը կանխելը: Այսինքն զրպարտության նորմերի միակ իրավաչափ նպատակը պետք է լինի հեղինակության պաշտպանությունը:

Գործի փաստերից և պատասխանող կողմից ներկայացրած փաստարկներից ելնելով՝ Դատարանը միանգամայն հաստատված համարեց, որ ներպետական մարմինները հետևում էին իրավաչափ նպատակ իրենց գործողություններում և հարցի հետագա քննարկումն աննպատակահարմար համարեց: Կարևոր էր նաև այն

հանգամանքը, որ Էստոնիայի ներպետական օրենսդրության համապատասխան հոդվածը ձևակերպված էր նույնատիպ արտահայտություններով, ինչ Եվրոպական Կոնվենցիան: Օրինակ՝ Էստոնիայի սահմանադրության 45 հոդվածը նշում է որ խոսքի ազատությունը, այդ թվում նաև տպագիր մամուլի ազատությունը կարող է սահմանափակվել «այլ անձանց իրավունքները և ազատությունները», «պատիվը և բարի անունը» պաշտպանելու նպատակով: Այնուհետև, ըստ Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր սկզբունքների մասին օրենքի, անձն իրավունք ունի դիմել դատարան իր պատիվը արատավորելուց կանխելու համար: Այսինքն, և՛ ներպետական, և՛ Կոնվենցիայի նորմերը ազգային մարմիններին բավարար հիմք էին տալիս՝ Դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելու :

1.5.3. Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

Կողմերի ներկայացրած փաստարկները գնահատելու համար Ղատարանն ուշադրություն դարձրեց բոլոր այն գործոնների վրա, որոնք ընդհանրապես կարևոր դեր են խաղում զրպարտության մեղադրանքով այնպիսի գործերում, որտեղ փաստերն ընդգրկում են մի կողմից արտահայտվելու ազատությունը և լրագրողական ազատությունը, իսկ մյուս կողմից հանրային դեմքերի մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը և նրանց նկատմամբ թույլատրելի քննադատության սահմանները: Նման գործոնների շարքին են պատկանում, ինչպես նշում է Ղատարանը, արտահայտվելու տեսակը (կետ 59), Ղատարանի վերադաս դերը միջամտության մասին գնահատականը տալիս (կետ 60 – 61), մամուլի հատուկ դերը հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելիս և թույլատրելի քննադատության սահմանները կախված տվյալ գործի փաստերից (կետ 62), և վերջապես, Ղատարանի ունեցած դերը տվյալ գործով վարույթում (կետ 63):

1) Սոցիալական սուր պահանջի առկայությունը

Ինչպես նշվեց վերևում, սոցիալական սուր պահանջի առկայությունը համարվում է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» սկզբունքի առաջին տարրը: Ինչևէ, կողմերը այս չափանիշին չեն անդրադարձել իրենց պնդումներում: Գուցե պատճառն այն է, որ նրանք որոշել էին, որ գործի փաստերից ելնելով կարիք չկար անդրադառնալ այս թեսթին: Ուստի, Ղատարանը նույնպես որևէ կերպ չանդրադարձավ այս հարցին: Կողմերի հիմնական պնդումները և Ղատարանի գնահատականները արվեցին երկրորդ տարրի՝ միջոցների «համաչափության» սկզբունքի շուրջ:

2) Միջամտության համաչափությունը

Հաշվի առնելով, որ իր դերը կայանում է ազգային դատարանների՝ իրենց տրված հայեցողության շրջանակներում կայացված վճիռների համապատասխանությանը Կոնվենցիայի 10 հոդվածին որոշու մեջ, Եվրոպական դատարանը ընդունեց, որ “*abielulihkuja*” and “*rongaema*” բառերի օգտագործումը

արդարացնում էին պետության գործադրած միջոցները՝ տկն. Լաանարուի արժանապատվությունը և իրավունքները պաշտպանելու նպատկով: Այս իմաստով Դատարանը գործեց իր իրավագործության շրջանակներում՝ առանց քննելու և գնահատական տալու, թե արդյոք նշված բառերը վիրավորական էին՝ և՛ իրենց սովորական գործածության իմաստից ելնելով, և՛ ըստ բովանդակության: Ուստի, Դատարանը կետ 65-ում հայտարարեց, որ հիմնականում պետք է որոշի, թե արդյոք պետությունը կարողացել է ճիշտ հավասարակշռություն սահմանել երկու բախվող իրավունքների միջև, որոնք են՝ տկն. Լաանարուի արժանապատվության պաշտպանության իրավունքը և լրագրողի ազատ արտահայտվելու իրավունքը (Կոնվենցիայի 8 և 10 հոդվածների բախումը): Այստեղից բխում է, որ հիմնական հարցը կայանում էր նրանում, թե արդյոք պետությունը հետևել էր «համաչափության» սկզբունքին: Այս համատեքստում այնպիսի գործոններ, ինչպիսիք են խոսքի իրավունքի վրա վտանգավոր ներգործությունը (chilling effect), լրագրողական վարքագծի նորմերը, հանրային շահը, պատժատեսակը կարևոր դեր են խաղում:

Արտահայտվելու ազատության համաչափության կոնֆլիկտի համատեքստում «համաչափության» սկզբունքի սահմանումը լավագույն տեսքով ներկայացրել է ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպությունը 1.3 սկզբունքում, ըստ որի սահմանափակումը չի կարող արդարացված համարվել, եթե

- ա. հեղինակության պաշտպանության համար տվյալ հանգամանքներում առկա է ավելի պակաս խստության և ավելի հասանելի միջոց:
- բ. սահմանափակումը չի համապատասխանում համաչափության չափորոշիչին, եթե անձի հեղինակության պաշտպանության իրավաչափ նպատակը չի գերակշռում արտահայտման ազատությանը հասցվող վնասին:

1. Թույլատրելի քննադատության սահմանը/հանրային շահ

ԱՐՏԻԿԼ 19-ի 8-րդ սկզբունքը նշում է, որ գրապարտության նորմերը ոչ մի հանգամանքներում չպետք է հատուկ պաշտանվածություն տրամադրեն հանրային պաշտոնյաներին՝ անկախ նրանց կարգավիճակից և պաշտոնից: Այս սկզբունքը ներառվել է՝ այն հանգամանքից ելնելով, որ ընդունվել են մեծ թվով դատավճիռներ, ըստ որոնց սույն պաշտոնյաները պետք է ավելի շատ և ոչ թե քիչ քննադատություն հանդուրժեն:

Նաև, ինչպես նշվեց վերևում, այն հանգամանքը, թե արդյոք լրատվական նյութը վերաբերվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող նյութին, նույնպես կարևոր է թույլատրելի քննադատության սահմանները որոշելիս: Կարևոր է նաև՝ արդյոք գրապարտված անձը քաղաքական գործիչ է, թե հանրային դեմք: Իմանալով այս ամենը՝ Դիմումատուն պնդում էր իր փաստարկների սկզբից, որ տկն. Լաանարուն հանդիսանում էր հանրահայտ հանրային գործիչ և նրա անձնական կյանքի որոշ մանրամասներ հանրային հետաքրքրություն էին ներկայացնում (նրա անձնական կապերը Ներքին գործերի նախկին նախարարի հետ և նրա կապը տեսաժապավենի հետ կապված պատմությանը): Այս պնդումները Դիմումատուի

առաջին և ամենակարևոր պաշտպանությունն էր, քանի որ նա հրաշալի հասկանում էր, որ հանրային գործիչների նկատմամբ քննադատության սահմանները լայն են: Նրա երկրորդ պաշտպանությունը հանդիսանում էր այն պնդումը, ըստ որի լրատվական նյութը ներկայացնում էր հանրային հետաքրքրություն՝ հաշվի առնելով տկն. Լաանարուի կարևոր դերը էստոնիայի քաղաքական կյանքում: Եվ երրորդ պաշտպանությունը հանդիսանում էր նրա՝ որպես լրագրողի հատուկ դերը, քանի որ տեղեկատվություն տրամադրելը արդարացված էր ոչ միայն լրատվամիջոցների հատուկ գործառնություն, այլ նաև տեղեկատվություն ստանալու հանրության պահանջով: Նշված երեք փաստարկների հիման վրա Դիմումատուն պնդում էր, որ

«չէր անցել թույլատրելի քննադատության սահմանները և իր լրագրողական ազատությունը զերակշռում էր տկն. Լաանարուի անձնական և մասնավոր կյանքի պաշտպանվածության իրավունքին»
(կետ 45-48):

Անձնական կյանքի իրավունքի շրջանակները նեղանում են երկու հանգմանքների առկայության դեպքում: Առաջին, եթե անձը հանրային դեմք է և նրա անձի վերաբերյալ առկա է բավական հանրային հետաքրքրություն: Սակայն կառավարությունը Դիմումատուի առաջ քաշած պնդումներին չի առարկում: Կառավարությունը միայն պնդում էր, որ Դիմումատուի փաստարկները հանրային հետաքրքրության առկայության վերաբերյալ անհիմն են: Կառավարությունը Դատարանի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ վիճարկելի ժամանակահատվածում տկն. Լաանարուն արդեն պաշտոնաթող էր եղել և հեռացել քաղաքականությունից: Նաև, որ նշված ժամանակահատվածում տկն. Լաանարուի գործողությունները պայմանավորված չէին պաշտոնական պարտավորությունները կատարելով: Վիճահարույց հայտարարությունը կատարվել էր 1996 թվականին, իսկ նա պաշտոնաթող էր եղել 1995-ին: Այս փաստը մեծ ազդեցություն ունի ամբողջ գործի ելքի վրա: Լինգենսի գործում քաղաքական գործիչների վրա պաշտպանությունը տարածվում է նույնիսկ այդ դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպես անհատ անձինք: Տվյալ գործում տկն. Լաանարուն հանդես էր գալիս որպես անհատ անձ կամ սովորական քաղաքացի, նա այլևս պետական բարձր պաշտոնյա չէր հանդիսանում, այսինքն նրա գործողություններն այլևս որևէ կերպ չէին կարող ազդեցություն ունենալ ամբողջ հանրության վրա և այդ իմաստով հանրության մոտ չէր կարող մեծ հետաքրքրություն լինել նրա «գաղափարների» կամ «դիրքորոշման» վերաբերյալ այնպիսի հարցերի մասին, որոնք հուզում էին հանրությանը: Եվ վերջապես, նա պաշտոնաթող էր եղել վիճահարույց հայտարարությունից մեկ տարի առաջ: Բոլոր նշված հանգմանքները ի մի բերելով՝ համոզիչ հաստատվում է այն պնդումը, որ տվյալ ժամանակահատվածում նրա անձը և արարքները հանրային հետաքրքրություն չէին առաջացնում:

Անձնական կյանքի իրավունքը նեղանում է նաև այն դեպքում, երբ գրպարտված անձը իր արարքներով նպաստում է իր անձի շուրջ հանրության հետաքրքրությունը բարձրացնելուն: Այս սկզբունքն ընդունվում է ԵԽ անդամ շատ

երկրների ներպետական դատական պրակտիկայում¹¹, չնայած այս հարցով ՄԻԵԴ-ը դեռ հստակ որոշում չի կայացրել: Դիմումատուն նշել էր այն հանգամանքը, որ տկն. Լաանարուն իր գործողություններով ձգտում էր իր անձի շուրջ հանրային հետաքրքրություն ստեղծել: Սա վերաբերվում է այն դրվագին, երբ նա իր գրքում պատմում էր երեխայի հետ ունեցած իր հարաբերությունների մասին: Ուստի, դիմումատուն պնդում էր, որ նա չէր կարող ակնկալել իր մասնավոր կյանքի մեծ պաշտպանվածություն, երբ ինքն էր նպաստում դրա հանրայնացմանը:

Սակայն Դատարանը չընդունեց Դիմումատուի փաստարկները: Դատարանը որոշեց նախ և առաջ պարզել, թե ինչ համատեքստում էին օգտագործվել նշված բառերը, ինչն էր ստիպել Դիմումատուին արտասանել տվյալ բառերը և ինչ արժեք էր դա ներկայացնում հանրության համար:

Դատարանը չփորձեց պարզել բառերի վիրավորական լինելը կամ չլինելը: Այն միանշանակ ընդունեց ներպետական դատարանների եզրակացությունը, որ նշված բառերը վիրավորական էին: Այս իմաստով Դատարանը ներպետական դատարաններին տվեց հայեցողության լայն ոլորտ: Այնուհետև Դատարանը պարզեց, որ տվյալ բառերն օգտագործելու դրդապատճառ էր հանդիսացել այն, որ Դիմումատուն ցանկացել էր արտահայտել բացասական կարծիք իր հարցազրույցի ընթացքում: Դատարանը չի առարկում Դիմումատուի այս իրավունքի դեմ: Սակայն, նկատի ունենալով լրագրողական վարքագծի ընդունված նորմերը և լրագրողական պատասխանատվությունը՝ Դատարանը գտավ, որ Դիմումատուն կարող էր նույն բացասական միտքը արտահայտել այլ բառերի միջոցով, որոնք էստոնիայի հասարակությունում վիրավորական չեն համարվում (Այս մասին ավելի մանրամասն քննարկվում է ստորև) Եվ վերջապես, Դատարանը համարեց, որ հեռուստատեսությամբ վիրավորական բառերի օգտագործումը հանրությանը բացասական արժեք է հաղորդում:

2. Լրագրողական վարքագծի նորմերը

Կոլումբանիի գործով դատավճռում Դատարանը սահմանեց, որ Կոնվենցիայի 10 հոդվածի պաշտպանությունը ակնկալելու համար լրագրողները պետք է գործեն բարեխղճությամբ, ճիշտ փաստացի հիմքերի վրա և տրամադրեն վստահելի և ճշգրիտ տեղեկատվություն՝ լրագրողական վարքագծի նորմերի համաձայն: «Բարեխղճության» տարրը խիստ կարևոր է ցույց տալ զրպարտության մեղադրանքով այն գործերում, որտեղ վիճարկվում են վարքագծի նորմերը:

Ըստ ԱՐՏԻԿԼ 19-ի, զրպարտության քրեական նորմեր կիրառելու միակ բացառությունը պետք է լինի, եթե զրպարտված կողմը կարողանում է ապացուցել ավելին, քան ողջամիտ կասկածն է, որ զրպարտող հայտարարությունը կեղծ է, կամ այն արվել է «ակնհայտ չարամտությամբ»՝ «նախորդք իմանալով փաստերի կեղծ լինելու մասին և նպատակ ունենալով զրպարտված անձին վնասել»: Նման չափանիշներ տրվում են ԵԽ անդամ շատ երկրների ներպետական օրենսդրությամբ: 2002թ. հոկտեմբերի 17-18-ին Ստրասբուրգում կայացած գիտաժողովում, որը վերաբերվում էր զրպարտության և վիրավորանքի նորմերին, մասնակիցները

¹¹ Դուգլասն ընդդեմ Հելլօ ամսագրի, (16 հունվարի 2001)

ընդունեցին համատեղ հայտարարություն, որը պարունակում էր մի շարք առաջարկություններ:¹² Դրանցից մեկը վերաբերվում էր «արդար մեկնաբանություն» սկզբունքին: Ըստ դրա՝ «լրագրողներին պետք է հնարավորություն տրվի օգտվել «ճշմարտության պաշտպանությունից», ինչպես նաև հնարավորություն տրվի օգտվել արդար մեկնաբանության սկզբունքից, որը վերաբերվում է այն դեպքերին, երբ լրագրողը գործում է ողջամտորեն և բարեխղճորեն»:

Տվյալ գործում կառավարության հիմնական փաստարկը կայանում էր նրանում, որ Դիմումատուն չէր գործել լրագրողական վարքագծի սկզբունքների համաձայն: Մասնավորապես, որ իր բացասական միտքը կարող էր արտահայտել այլ բառերի օգնությամբ:

Հասկանալի է, թե ինչու ներպետական դատարանները չէին պահանջել Դիմումատուին ապացուցել իր հայտարարությունների ճշմարտացիությունը: Նույնը վերաբերվում է նաև Դատարանի վարույթում: Պատճառն այն է, որ անմիջապես իր փաստարկների սկզբից Դիմումատուն զարգացնում էր այն միտքը, որ կատարված հայտարարությունը գնահատող դատողություն էր՝ կարծիք, որը նույնպես պաշտպանվում է Կոնվենցիայի 10 հոդվածով: Այս իմաստով Կառավարությունը պնդում էր, ու Դիմումատուն չէր ենթարկվի քրեական հետապնդման, եթե Դիմումատուն նույն միտքը արտահայտեր (որ տկն. Լաանարուն էր հանդիսացել այլ անձանց ամուսնալուծվելու պատճառը, որ նա հոգ չէր տարել իր երեխայի դաստիարակության հարցում և այլն): Կառավարությունը հատկապես նշեց այն հանգամանքը, որ ներպետական դատարանները հանգել էին նույն եզրակացությանը, երբ պարզում էին, թե արդյոք նա գործել էր լրագրողական բարեխղճությամբ:

Բարեխղճության տարրը համարվում է լրագրողի պաշտպանությունը վերը նշված «ողջամտորեն կատարված լրատվություն» թեսթի համաձայն: Նույնիսկ, երբ հանրային հետաքրքրություն ներկայացնող փաստի վերաբերյալ հայտարարությունը ապացուցվում է, որ կեղծ է, մեղադրյալին պետք է հնարավորություն տրվի վիճարկել, որ տվյալ հանգամանքներում անհնարին էր ստուգել փաստերի ճշմարտացիությունը: Կեղծ հայտարարությունների վերաբերյալ ավանդական մոտեցումը, ըստ որի ապացուցման ծանրությունը դրվում է դիմումատուի վրա, հատկապես անարդարացի է լրատվամիջոցների պարագայում, որոնց պարտականությունն է հանրային հնչելություն ունեցող դեպքերի վերաբերյալ լրատվություն տալը և նրանք շատ հաճախ չեն կարող սպասել մինչև համոզվեն, որ բոլոր փաստերը ճիշտ են՝ մինչև նյութի հրապարելը կամ հեռարձակելը: Այս իմաստով փորձագետները տեղեկատվությունը համեմատում են շուտ փչացող ապրանքի հետ, որը պետք է առաքել որքան կարելի է շուտ: Նմանապես, որոշ տեղեկություններ անհրաժեշտ է «առաքել» որքան հնարավոր է շուտ, այլապես կկորցնի իր արժեքը և նպատակը, և ժամանակի տղության պատճառով անհնարին է ստուգել անխտիր բոլոր փաստերի ճշմարտացիությունը: Այս պատճառով համարվում է, որ մեղադրյալը կարողացել է ապահովել իր պաշտպանությունը, եթե ցույց է տալիս, որ մեկ այլ անձնավորություն, լինելով իր տեղը, նույն տեղեկությունը կտարածեր նույն կերպով և տեսքով՝ ինչպես ինքը:

¹² Հայտարարության տեքստի համար տես. www.coe.media.int

Տվյալ գործում Դատարանը չհամոզվեց, որ Դիմումատուն գործել էր բարեխղճությամբ՝ օգտագործելով հարցազրույցի ընթացքում վիրավորական բառեր: Դատարանն ընդունեց կառավարության տեսակետը, ըստ որի Դիմումատուն կարող էր նույն բացասական միտքն արտահայտել այլ բառերի օգնությամբ:

3. Քրեական մեղադրանքի վտանգավոր ազդեցությունը (chilling effect)

Դիմումատուի ամենակարևոր փաստարկներից մեկը հանդիսանում էր այն, որ լրագրողի նկատմամբ՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ քրեական վարույթ հարուցելը և մեղադրանք ներկայացնելը հակասում է հաստատված միջազգային նորմերին (տես կետ 44): Ավելին, ինչպես արդեն նշվեց, քրեական նորմեր կիրառելը էլ ավելի անարդարացված են, եթե օրենսդրությունը թույլ է տալիս այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ քաղաքացիական հայցով: Սույն պնդումը հաստատվում է նաև ԱՐՏԻԿԼ 19 –ի 1.3 սկզբունքով, որի մասին նշվեց վերևում: Նշվածը հիմնավորելու համար Դիմումատուն հղում կատարեց Չեռագոյն դատարանի 1997թ. դեկտեմբերի 1-ի որոշման վրա, որով դատարանը հաստատեց, որ անձի հեղինակությունը պաշտպանելու համար քաղաքացիական օրենսգիրքը տրամադրում էր դատական պաշտպանության հնարավորություն: Կառավարությունը առարկեց այս պնդումի դեմ, նշելով, որ հայցը հարուցվել էր տիկին Լաանարուի կողմից մասնավոր դատախազի միջոցով և այդ իմաստով ներպետական մարմինները ոչ մի առնչություն չեն ունեցել:

Եթե Դիմումատուի վերը նշված պնդումները համեմատենք ԱՐՏԻԿԼ 19 - ի 4-րդ սկզբունքի հետ, ապա նրա փաստարկները բավականին համոզիչ են: Նշված սկզբունքը նշում է հիմնականում երկու ուղղություն, ըստ որոնց՝

քրեական հետապնդումը անձի հեղինակության պաշտպանության «համաչափ» կամ «իրավաչափ» միջոց չէ՝ հատկապես լրագրողների պարագայում: Այդ պատճառով նման միջոցներն անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում, կամ

բանտարկությունը որպես պատժամիջոց չպետք է կիրառվի ոչ մի հանգամանքների դեպքում

Իսկ 4(ա) սկզբունքը նշում է.

Ջրպարտության բոլոր քրեական նորմերը պետք է ապաքրեականացվեն և փոխարինվեն համապատասխան քաղաքացիական նորմերով: Այն երկրներում, որտեղ զրպարտության համար դեռ կիրառվում են քրեական նորմեր, անհրաժեշտ է աստիճանաբար կիրառել այս սկզբունքը:

Շատ երկրներում զրպարտության քաղաքացիական նորմերը հեղինակության պաշտպանության միակ իրավական միջոցն են: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ կամ քրեական նորմեր գոյություն չունեն, կամ դրանք այլևս չեն

օգտագործվում: Այս երկրների փորձը ցույց է տալիս, որ քրեական նորմերը արդյունավետ չեն հեղինակությունը պաշտանելու համար: Քանի որ դրանք վտանգավոր ազդեցություն են թողնում արտահայտվելու ազատության վրա, ապա դրանց կիրառումը արդարացված չէ: Միջազգային դատարանները շարունակ հիշեցնում են ազգային դատարաններին, որ քրեական նորմերը կիրառելիս անհրաժեշտ է ցուցաբերել զսպվածություն:

Տվյալ գործում թեև Քրեական դատավարական օրենսգրքի 130 հոդվածը որպես պատժամիջոց տրամադրում էր և բանտարկություն և տուգանք, ու թեև իշխանությունները նախընտրեցին նվազ խստության պատիժը տուգանքի տեսքով, այնուամենայնիվ, արդեն այն հանգամանքը, որ արարքը որակվում է որպես հանցանք իր բնույթով և արդեն այն փաստը, որ իշխանությունները կարող էին օգտագործել նաև բանտարկությունը արդեն իսկ վտանգավոր ազդեցություն ունի և ծառայում է որպես զգուշացում լրագրողների և լրատվամիջոցների համար: Այսպիսով, տվյալ հոդվածի գոյություն արդեն իսկ վտանգավոր ազդեցություն ունի տպագիր մամուլի արտահայտվելու ազատության իրավունքի վրա: Այս իմաստով էստոնիայի ներպետական օրենսդրությունը հակասում է միջազգային չափանիշներին: Սակայն ինչ-ինչ պատճառներով Դիմումատուն հստակորեն չի ընդգրկում այս հանգամանքը իր փաստարկներում: Դատավճռի 69 կետում էստոնիայի դատարանների վճիռը գնահատելիս Դատարանը անհրաժեշտ չհամարեց անդրադառնալ դրանցում արծարծվող բոլոր հարցերին՝ ներպետական դատարաններին հայեցողության լայն ոլորտ թողնելով: Նման մոտեցման պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ չնայած կիրառվել էին քրեական բնույթի նորմեր, սակայն Դիմումատուին առաջադրվել էր միայն տուգանք՝ այդպիսով բանտարկությունից նրան զերծ պահելով: Այս փաստը բերում է մեզ հաջորդ կարևոր հանգամանքին:

4. Նյութական վնասի չափի վտանգավոր ազդեցությունը

Ակնհայտ է, որ զրպարտության համար ներկայացվող պատժաչափի և արտահայտվելու ազատության երաշխիքների միջև առկա է ուղիղ կապ: Չարդարացված խիստ պատժաչափերը, նույնիսկ իսկապես զրպարտող հայտարարության համար, խախտում են արտահատվելու ազատությունը: Սա նշանակում է, որ պատժաչափերը պետք է խստորեն համաչափ լինեն պատճառած վնասին: Պատժաչափերի համաչափ լինելու սկզբունքի հատկանիշներից մեկն էլ այն է, որ դատարանի կողմից վնասի փոխհատուցման չափը որոշելիս պետք է հաշվի առնել, թե հատուցման ինչ ձև է տրամադրվել՝ օրինակ ինքնակարգավորման կամ կանավորության սկզբունքով: Եթե հատուցման տվյալ ձևը ինչ որ կերպ արդեն փոխհատուցել է պատճառած վնասը, այս հանգամանքը պետք է պատճառ հանդիսանա, որպեսզի նյութական փոխհատուցման չափը նվազեցվի:

Ըստ ԱՐՏԻԿԼ 19-ի սկզբունք 15(բ) – ի,

Նյութական վնասի չափը որոշելիս պետք է հաշվի առնել արտահայտվելու ազատության վրա նման որոշման բացասական ազդեցության հետևանքները: Նյութական վնասի փոխհատուցումը պետք է համաչափ լինի վնասին.

անհրաժեշտ է հաշվի առնել արդեն ընձեռնված բարոյական վնասի փոխհատուցման միջոցները, ինչպես նաև այլ խախտումների համար արդեն իսկ տրված նյութական վնասի փոխհատուցումներ:

Ըստ ԵՄ Խորհրդարանական վեհաժողովի 9640 փաստաթղթի, որը զեկուցում է Եվրոպայում արտահայտվելու ազատության մասին անցկացրած մոնիտորինգի արդյունքների մասին, «իրավաբանորեն ահաբեկելու այլ ձևերից մեկը գրպարտության գործերում փոխհատուցման տեսքով պահանջվող անհամաչափորեն բարձր տուգանքի չափերն են, որոնք լրատվամիջոցներին սնանկացման եզրին են հասցնում և շարունակվում են տարածվել Եվրոպայի մի շարք երկրներում»: Ըստ զեկույցի, լրատվամիջոցներից վնասի դիմաց աստղաբաշխական գների վճարման պահանջներ ավելի հաճախ դրվում են ԱՊՀ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Համաչափության սկզբունքը պահպանելու պարտավորություն ցույց տալու համար պատասխանող պետությունը Դատարանի ուշադրությունը հրավիրեց երկու հանգամանքների վրա: Առաջին, Դիմումատուին ներպետական դատական քննության ընթացքում տրամադրվել էր այլընտրանքային տարբերակ, որն էր գործի բարեկամական կարգավորումը՝ տկն. Լաանարուից ներողություն խնդրելու միջոցով: Սակայն Դիմումատուն մերժել էր այս առաջարկը: Այսպիսով, կառավարություն ցույց տվեց, որ վերը նշված սկզբունքը հարգելով՝ փորձ էր արվել հարցը կարգավորել «ոչ-նյութական փոխհատուցման» միջոցով, որը սակայն մերժվեց Դիմումատուի կողմից:

Երկրորդ, ինչպես նշվել է 69-րդ կետում, պատժատեսակի բնույթը և չափը նույնպես գործոններ են, որոնք պետք է հաշվի առնել համաչափության հարցը քննելիս: Կառավարությունը նվազագույն գումարի տուգանք էր նշանակել, որն իսկապես կարող էր միայն բարձր գնահատվել Եվրոպական դատարանի կողմից: Քրդատի 130 հոդվածը որպես պատժաչափ տրամադրում էր տուգանքից մինչև բանտարկություն: Ըստ Քրեական օրենսգրքի 28 հոդվածի՝ տուգանքի սահմանված չափը հասնում էր մինչև անձի օրական եկամտի մինչև ինը հարյուրապատիկը: Դիմումատուն տուգանվել էր 220 կրոնով, որը կազմում է օրական նվազագույն աշխատավարձի տասնապատիկը: Այսպիսով, հաշվի առնելով պատժաչափի ամբողջ սանդղակը՝ տուգանքի նվազագույնից մինչև առավելագույն չափը, այդ թվում նաև բանտարկությունը, կարել էր ասել, որ ընտրվել էր նվազագույն չափի տուգանքը: Ամենակարևորն այն էր, որ Դիմումատուն չէր ենթարկվել բանտարկության: Նշված հանգամանքը իսկապես դրական գործոն է պատասխանող պետության համար պատժաչափի, թեկուզ քրեական, բնույթը և խստությունը գնահատելիս:

Տոլստոյ Միլուսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորությանը գործում (1995) 20 EHRR 442) դատարանը ուշադրություն դարձրեց տուգանքի ռեկորդային մեծության չափի վրա, որը կազմում էր մեկ ու կես միլիոն ֆունտ: Սա գրպարտության գործերով տուգանքի փոխհատուցման երբևիցե սահմանված ամենաբարձր չափն էր: Դրան ավելացրած, Անգլիայի Բարձրագույն դատարանը նաև հրահանգեց արգելել գրպարտող հայտարարության հրապարակումը: Դատարանը որոշեց, որ փոխհատուցման չափազանց բարձր չափը համարվում է Կոնվենցիայի 10 հոդվածի

խախտում, որովհետև դրանում չի արտահայտվում «հեղինակությանը հասցրած վնասի հետ ողջամիտ կապ»: Ըստ Դատարանի, անհիմն բարձր չափերի տուգանք սահմանելու վերաբերյալ որոշումները կարող են «սառեցնել ազդեցություն» ունենալ լրատվամիջոցների արտահայտվելու ազատության վրա: Նմանապես, նման կարգի որոշումները կարող են նույն ազդեցությունը ունենալ լրագրողների վրա՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ քննադատական հոդվածներ գրելիս:

Կարելի է ասել, որ նվազագույն տուգանք սահմանելու հանգամանքը ամենահիմնական պայմանն էր, որի միջոցով գործը շահեց պետությունը: Եթե ներպետական դատարանը սահմաներ տուգանքի բարձր չափ, որը կարող էր պոտենցիալ ազդեցություն ունենալ մամուլի ազատության վրա, դատավճիռը կարող էր այլ կերպ լինել:

Համաչափության տեսանկյունից խոսելիս Տամների գործը մեծ նմանություն ունի Կումպան և Մազարե Կ-ն ընդդեմ Ռումինիայի գործին (համ. 33348/96), որում Դատարանը համարեց, որ 10-րդ հոդվածի խախտում չի եղել: Այս գործում Դատարանը նկատեց, որ դիմումատուները դատապարտվել էին քաղաքի մի դատավորի մասին քննադատական հոդված պատրաստելու համար: Հոդվածում նշվել էր, որ տվյալ դատավորն օրենքները չգիտի և կաշառք է վերցնում: Ներպետական դատարանների նման Եվրոպական դատարանը նույնպես վճռեց, որ հոդվածը վնասում էր դատավորի հանրային հեղինակությանը, ինչպես նաև, որ հոդվածը որևէ կերպ չէր նպաստում ընդհանուր հանրային հետաքրքրություն ներկայացնող բանավեճին: Ավելին, պատասխանող կողմը ներկայացրել էր ծանրակշիռ պատճառներ դիմումատուին ծաղրանկարները հրապարակելու հիմքով դատապարտելու համար, որը կայանում էր դատավորի հեղինակության և արդարադատության հեղինակության պաշտպանությունը: Համարվեց, որ ծաղրանկարը կարող էր միջամտել դատավորի անձնական և մասնավոր կյանքին և ,որպես այդպիսին, անցել էր թույլատրելի քննադատության սահմանները: Եվ վերջապես Դատարանը նկատեց, որ չնայած խիստ դատավճիռ էր ընդունվել, սակայն դիմումատուներն այնուամենայնիվ չբանտարկվեցին համաներման պատճառով: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նրանց չարգելվեց զբաղվել իրենց մասնագիտական գործունեությամբ: Նման հանգամանքներից ելնելով՝ Դատարանը որոշեց, որ դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունը հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ կատարվել էր համաչափորեն:

5. Գնահատող դատողություն

Լայնորեն ընդունված է, որ 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն գաղափարները և տեղեկությունը, որպես այդպիսին, այլ նաև դրանց մատուցման ձևը: (տես Ջերսիլդն ընդդեմ Դանիայի 1994) 19 EHR 1, կետ 31): Դատարանը Լինգենսի գործով դատավճռում նաև նշել է, որ եթե փաստերի գոյությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունը ենթակա չէ ապացուցման: Տվյալ գործում Դիմումատուն պնդում էր, որ իր կատարած հայտարարությունը գնահատող դատողություն էր, այլ ոչ թե փաստացի հայտարարություն: Այս

կապակցությամբ նա պնդում էր, որ վիճահարույց բառերն արտասանվել էին հարցի տեսքով, այլ ոչ թե հայտարարության և որ դրա նպատակն էր դրդել խոսակցին՝ պարոն Ռուսսակին, արտահայտել իր կարծիքը և ոչ թե արտահայտել իր անձնական կարծիքը: Այսպիսով Դիմումատուն փորձում էր հղում կատարել գնահատողական դատողության պաշտանության վրա այն իմաստով, որ հարցազրույց վերցնելիս օգտագործել էր արտահայտման լրագրողական ոճ: Նա պնդում էր, որ լրագրողական արտահայտչական ոճ կիրառելու համար չէր կարող ենթարկվել պատասխանատվության, քանի որ տեղեկատվության մատուցման ձևը նույնպես պաշտանվում է 10-րդ հոդվածով: Գործի փաստերից երևում է, որ նույն պնդումները ներկայացվել էին նաև վերաքննիչ դատարանում՝ հայտարարելով, որ դատարաններն իրավունք չունեն պահանջել, թե ինչ ոճ պետք է օգտագործի լրագրողը այս կամ այն լրատվությունը տալիս: Սակայն վճռաբեկ դատարանը չընդունեց այս փաստարկները, հայտարարելով, որ արտահայտվելու ոճը պաշտպանվում է լրագրողական ազատությամբ միայն այն դեպքում, երբ այն չի վիրավորում կամ նվաստացնում մարդկային արժանապատվությունը:

Սակայն դատարանը հստակորեն չանդրադարձավ գնահատողական դատողության մասին Դիմումատուի պնդումներին: Փաստորեն, Դատարանն ընդունեց, որ վիճահարույց հայտարարությունը իրենից ներկայացնում էր գնահատող դատողություն, սակայն որոշեց, որ դրանք պարունակում էին վիրավորական խոսքեր և այդ իմաստով չի կարող պաշտպանվել 10-րդ հոդվածով: Բացի այդ, Դատարանը նախկին դատավճռով սահմանել է, որ կարծիք հայտնելու ազատությունը նույնպես բացարձակ չի և այն սահմանափակվում է այնտեղ, որտեղ բացակայում են նման հայտարարության փաստացի հիմքերը (տես, օրինակ, Ղե Հայեսն ընդդեմ Բելգիայի, կետ 47): Եթե հիմնվենք նշված ձևակերպման վրա, ապա ստացվում է, որ Դիմումատուն իրականում ներկայացրել էր փաստացի հիմքեր: Սակայն գերակշռում է այն փաստը, որ Դիմումատուն իր կարծիքը ձևավորել էր վիրավորական բառերով: Այս իմաստով Կառավարությունը ճիշտ մարտավարություն էր որդեգրել, քանի որ միշտ ջանում էր հեռու մնալ հայտարարության փաստացի հիմքերը վիճարկելուց և շեշտը միշտ դնում էր այն բանի վրա, որ լրագրողն օգտագործել էր ոչ պատշաճ բառեր իր միտքն արտահայտելու համար, որի իրավունքը նա ուներ:

6. Ներպետական դատարանների կողմից գործը քննելու եղանակը

Այս գործի կարևոր գործոններից է այն, թե ինչպես էին ներպետական բոլոր երեք դատարանները կատարել փաստերի վերլուծություն: Բոլոր դատարանները լայնորեն օգտագործել էին Կոնվենցիայի նորմերը իրենց վճիռներում: Այս իմաստով Եվրոպական դատարանը բավարարված էր, թե ինչպես էին ազգային մարմինները հավասարակշռել «գործում բախվող տարբեր շահերը»: Նման մոտեցումը բարձրացնում է ազգային մարմինների նկատմամբ վստահությունը, այն իմաստով, որ որոշումները կայացվում են Կոնվենցիայի համաձայն: Ամենահիմնական մոտեցումն այն է, որ միջազգային դատարանները ստորադաս են ազգային դատարաններին Կոնվենցիայի նորմերը կիրառելիս: Այս գործում մենք տեսնում ենք, թե ինչպես է սովյալ սկզբունքն օգտագործվում պրակտիկայում: Եթե ուսումնասիրենք 1997թ. օգոստոսի 26-ի Գերագույն դատարանի վճիռը, կտեսնենք, որ այս

դատարանը գործն ուսումնասիրում էր Եվրոպական դատարանին շատ նման մոտեցմամբ: Կոնվենցիայի բոլոր նպատակահարմար չափանիշները և չափորոշիչները կիրառվեցին, ինչպես նաև այս դատարանին հաջողվեց, ընհանուր առմամբ, ողջամտորեն հավասարակշռել միևնույն գործի շրջանակներում տկն. Լաանարուի մասնավոր կյանքի իրավունքը պրն. Տամների՝ որպես լրագրողի արտահատվելու ազատության իրավունքի հետ: Ղա է պատճառը, որ Ղատարանն իր որոշման մեծ մասի համար որպես հիմք ընդունեց ներպետական դատարանների եզրակացությունները: Ղրան ավելացրած նաև, եթե հաշվի առնենք պետություններին տրվող հայեցողության իրավունքը, ակնհայտ էր, որ պետությունն ավելի շատ հնարավորություններ ուներ հաղթելու այս գործում:

7. Արդյունավետ իրավական դատական պաշտպանության իրավունք

Ըստ ԱՐՏԻԿԼ 19-ի 19-րդ սկզբունքի՝ մեղադրյալներին պետք է տրվի ներպետական արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն այն դեպքերում, երբ զրպարտության հիմքով անհիմն հայց է բերվում դատարան, որի հիմնական նպատակը արտահայտվելու ազատության սահմանափակումն է ֆինանսապես և քաղաքականապես հզոր շրջանակների կողմից: Ըստ այս սկզբունքի մեկնաբանության՝ նման պաշտպանություն ընծեռելու կարևորությունը բացատրվում է վերը նշված պրակտիկայի լայն տարածումը կանխելու անհրաժեշտությամբ: Եստոնիայի Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր սկզբունքների մասին օրենքի 23(1) կետ համաձայն, անձը իրավունք ունի դիմելու դատարան իր պատիվն ու հարգանքը արատավորող գործողությունները կասեցնելու պահանջով, եթե զրպարտող անձը չի կարողանում ապացուցել հրապարակված նյութի ճշմարտացիությունը: Ըստ Չերագույն դատարանի որոշման՝ անձը քաղաքացիական դատավարության կարգով կարող է անձը արատավորող հայտարարությունից պաշտպանվել միայն փաստացի հայտարարության դեպքում: Նշանակում է, որ ներպետական օրենքները հնարավորություն չեն տալիս քաղաքացիական դատավարական կարգով պաշտպանվելու այնպիսի հայտարարություններից, որոնք գնահատական- դատողություն են, այսինքն՝ կարծիք: Ղա դրդում է նման դեպքերում դիմել իրավական պաշտպանության քրեական դատավարական ընթացակարգին մասնավոր քրեական վարույթ հարուցելու միջոցով՝ ըստ քրեական դատավարական օրենսգրքի 130 հոդվածի: Ինչպես նշվեց, այս հոդվածը բաղկացած է մեկ նախադասությունից և լայնիմաստ արտահայտություններ է պարունակում: Սա էր պատճառը, որ տկն. Լաանարուն դիմել էր մասնավոր դատախազին քրեական հետապնդում հարուցելու պահանջով: Չերագույն դատարանի վճռում նշվում էր, որ տուժող կողմը դիմել էր քրեական դատավարական կարգով պաշտպանվելու միակ հնարավորությանը, այնինչ պետք է նշել, որ տուժողը ստիպված էր քրեական գործ հարուցել, քանի որ այլ միջոց ներպետական օրենքները նրան չէին ընծեռում: Սա պետք է համարել Եստոնիայի ներպետական օրենսդրության լուրջ բացթողում, որը լայն հնարավորություններ է բացում գնահատող դատողության համար լրագրողներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Եվրոպական դատարանը քննության չենթարկեց այս փաստը: Հարկ է հիշել, որ Կոնվենցիան կարող է խախտված

համարվել և՛ որոշակի գործուղությունների արդյունքում, և՛ օրենսդրության անհամապատասխանությամբ: Այս հոդվածի գոյությունն արդեն լրջորեն վտանգում է արտահայտվելու ազատությունը: Դիմումատուն այս հարցը բարձրացրել էր առաջին ատյանի դատարանում: Դատավճռի 44-րդ կետից երևում է, որ Չերագույն դատարանը փոխել էր էր դիրքորոշումը՝ հայտարարելով, որ իրականաում քաղաքացիական նորմերը իրավական պաշտպանության հնարավորություն տալիս էին: Սակայն փաստը մնում է այն, որ Եվրոպական դատարանը չանդրադարձավ Դիմումատուի բարձրացրած այն փաստարկին, ըստ որի չնայած համապատասխան քաղաքացիական դատավարական նորմերի առկայության, իր դեմ բերվել էր քրեական մեղադրանք, որն անհամատեղելի է միջազգային նորմերի հետ: Դրան հակառակ, Դատարանը մեծ մասամբ կենտրոնացել էր ոչ թե այն փաստի վրա, որ ներպետական նորմերը ոչ բավարար իրավական պաշտպանության հնարավորություն էին ընձեռում, այլ Դիմումատուի գործողությունների վրա:

Ավելին, ըստ դատավճռի 27 կետի, մասնավոր դատախազի միջոցով հարուցված քրեական գործերում գործի ըստ էության քննությունը սահմանափակվում է զրպարտված անձի դիմումում նշված փաստարկների շրջանակներում: Ստացվում է, որ ի հավելումն վերը նշված սահմանափակումների, լրագրողների իրավունքներն էլ ավելի են սահմանափակվում՝ զրկվելով գործի փաստերն իրենց ամբողջությամբ վերադաս դատարանի առջև վիճարկելու հնարավորությունից: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը գործի քննությունը կատարել էր՝ հիմնվելով ամբողջ հարցազրույցից մեջբերված մի փոքր հատվածի վրա, մինչդեռ Դիմումատուն պահանջում էր վճիռը կայացնել՝ հաշվի առնելով հարցազրույցի բովանդակությունն ամբողջությամբ: Գործի փաստերից երևում է, որ այս մասին Դիմումատուի միջնորդությունը մերժվել էր, քանի որ վերաքննիչ դատարանը հստակորեն անդրադարձել էր, որ գործի քննությունը սահմանափակվում էր միայն տկն. Լաանարուի բերած փաստարկների շրջանակներում, չնայած այն հանգամանքին, որ ինչ ինչ պատճառներով դատարանը որոշել էր գործին կցել հարցազրույցի ամբողջ տեքստը (միգուցե պրն. Տամների բողոքների ճնշման տակ):

Հաշվի առնելով վերը նշված երկու հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ Դիմումատուն գտնվել էր «էապես նվազ շահավետ վիճակում», քան պատասխանող կողմը ներպետական դատարաններում: Իսկ սա կարող էր առաջացնել 6-րդ հոդվածի խախտում, եթե Դիմումատուն որոշեր իր պնդումների մեջ ներգրավվել նաև արդարացի դատավարության սկզբունքի խախտման մասին փաստարկներ:

Համեմատելով իրերի նման իրավիճակը ԱՐՏԻԿԼ 19 նշված սկզբունքի հետ՝ կարելի է ասել, որ ներպետական օրենքի այս բացը լայն հնարավորություն է ստեղծում «ֆինանսապես և քաղաքականապես հզոր անձանց և կազմակերպությունների» համար լրագրողների դեմ սարքովի քրեական գործեր հարուցել՝ հաշվի առնելով, որ օրենսդիրը այլընտրանքի հնարավորություն չի տալիս: Այս իրավիճակը հակասում է նաև 4-րդ սկզբունքին, ըստ որի զրպարտության բոլոր քրեական նորմերը պետք է փոխարինվեն համապատասխան քաղաքացիական նորմերով: Ըստ սկզբունքի մեկնաբանության՝ «նույնիսկ այն երկրներում, որտեղ

զրպարտության քրեական նորմերը կիրառվում են ժամանակակից կերպով, միշտ է առկա է վտանգը, որ այդ նորմերը խախտումներով կկիրառվեն»:

1.6. Ջրպարտության և վիրավորանքի ՀՀ օրենսդրությունը և պրակտիկան

ՀՀ ներպետական պրակտիկայում հաճախ է պատահել, երբ զրպարտության և վիրավորանքի նորմերը օգտագործվել են հանրային պաշտոնյաների կողմից իրենց քննադատողների դեմ: Օրինակ, 2000 թվականին Հայկական ժամանակ թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը ենթարկվեց քրեական մեղադրանքի քաղաքական գործչին հասցրած վիրավորանքի համար, որի համար ենթարկվեց պայմանական բանտարկության: Մեղադրանքներ են բերվել նաև գրող Ջանիկ Ադամյանի դեմ 2002 թվականին իր գրած քննադատական ոճի բանաստեղծությունների համար: Ընդ որում մեղադրանք էր բերվել նաև բանաստեղծությունները տպագրողի՝ մեքենագրուհի Ջեննա Սահակյանի դեմ: Սակայն նրանց նկատմամբ մեղադրանքները հանվեցին այն բանից հետո, երբ Ջանիկ Ադամյանը երկու ամիս անցկացրեց կալանքի տակ, իսկ Սահակյանը՝ մի քանի օր ձերբակալության տակ: Փաշինյանի նկատմամբ նորից մեղադրանքներ ներկայացվեցին 2002թ. ապրիլին, որոնք այնուհետև հանվեցին:

2003թ. ապրիլի 18-ին Ազգանին ժողովն ընդունեց նոր քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ մտավ ապրիլի 30-ին՝ Նախագահի կողմից ստորագրվելուց հետո: Դժբախտաբար, նոր օրենսգրքում տեղ էին գտել զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ մի շարք հոդվածներ, որոնք են՝

Հոդված 135. Ջրպարտությունը

1. Ջրպարտությունը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուր հիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Ջրպարտությունը, որը դրսևվորվում է հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային լրատվության միջոցներով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկու հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները՝ զուգորդված՝ անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու մեջ մեղադրելով՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 136. Վիրավորանքը

1. Վիրավորանքը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձեւով ստորացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով:

2. Վիրավորանքը, որը դրսևորվում է հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային լրատվության միջոցներով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից երկու հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Հոդված 318. Իշխանության ներկայացուցչին վիրավորելը

1. Իշխանության ներկայացուցչին հրապարակայնորեն վիրավորելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկու հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը դրսևորվել է հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային լրատվության միջոցներով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով

Անհրաժեշտ է նշել, որ 2004թ. հունիսի 9-ին Ազգային ժողովը մի շարք փոփոխություններ կատարեց 315 և 316 հոդվածներում: Առաջինից հանվեց «ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով» արտահայտությունը, սակայն բարձրացվեց տուգանքի չափը մինչև «նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով»: Ավելին, երկրորդ կետի ազատազրկում սահմանող դրույթը փոխարինվեց «առավելագույնը մեկ տարի»

արտահայտությամբ, իսկ տուգանքը բարձրացվեց մինչև նվազագույն աշխատավարձի «երեք հարյուրապատիկից հազարապատիկի չափով»: Հոդված 136-ից «ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով» արտահայտությունը փոխարինվեց տուգանքով, որը սակայն բարձրացվեց «նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև չորս հարյուրապատիկի չափով»: Իսկ երկրորդ կետի մեկ տարվա բանտարկություն սահմանող դրույթը փոխարինվեց տուգանքով, որը սակայն նույնպես բարձրացվեց երկու հարյուրապատիկից մինչև ութ հարյուրապատիկ:

Թեև նշված փոփոխությունները դրական քայլեր էին, սակայն պետք է հաշվի առնել, որ դեռ առկա են մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ՝ պաշտպանվածության տարբեր մակարդակները սովորական քաղաքացու և պետական պաշտոնյային զրպարտելու կամ վիրավորելու առնչությամբ: Հոդված 318-ը «իշխանության ներկայացուցչին» հատուկ պաշտպանվածություն է ընձեռում:

2003թ. հունիսի 19-ին ԵԱՀԿ դեսպան Ռոյ Ռիվը բաց նամակ ուղարկեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանին: Նամակը ստորագրված էր Լրատվամիջոցների մասին օրենսդրության աշխատանքային խմբի անդամների կողմից, այդ թվում նաև Անգլիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ռումինիայի, Լեհաստանի դեսպանատների և ոչ-կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից:¹³ Նամակում կոչ էր արվում ապաքրեականացնել զրպարտության և վիրավորանքի նորմերը, ինչպես նաև քննադատում էր պետական պաշտոնյաներին տրված հատուկ պաշտպանության հնարավորությունը: Ըստ Ֆրեյմուտ Ղյուվի կողմից ԵԱՀԿ մշտական խորհրդին ներկայացրած զեկույցի (2003թ. հուլիսի 31), ԵԱՀԿ արտահայտվելու ազատության իրավունքի գծով ներկայացուցիչը նմանատիպ նամակ էր ուղարկել նաև արտաքին գործերի նախարարին: Այս նամակներն ուղարկվել էին ի պատասխան կառավարության արտահայտած անհամաձայնությանը միջազգային հանրության կողմից զրպարտության և վիրավորանքի նորմերի ապաքրեականացնելու մասին հորդորներին: Ֆրեյմուտ Ղյուվը նամակում նշում էր, որ տեղյակ է, որ Ազգային ժողովի նախագահը ստեղծել էր աշխատանքային խումբ՝ ԵՄ անդամ երկրների ներպետական օրենսդրությունը համեմատական վերլուծության ենթարկելու համար և որ աշխատանքին խումբը պարզել էր, որ Եվրոպայի բազմաթիվ երկրներում զրպարտության և վիրավորանքի նորմերը դեռ մնում են քրեական: Սակայն, Ֆրեյմուտ Ղյուվը նամակում կրկնեց ԵԱՀԿ-ի պաշտոնական դիրքորոշումը, ըստ որի «զրպարտությունը և վիրավորանքը պետք է ապաքրեականացվեն և կիրառվեն միայն տվյալ երկրի քաղաքացիական օրենսգրքում»:

¹³ Ոչ կառավարական կազմակերպություններն էին Եվրագիա հիմնադրամը, Բաց հասարակություն օժանդակություն հիմնադրամը-Հայաստանի մասնաձյուղը, Լոնդոնի ԱՐՏԻԿԼ 19, Երևանի մամուլի ակումբ, Հետաքննող լրագրողների ընկերակցությունը, Ինտերնյուզ, Պրոմեդիա, Լրատվամիջոցների օրենքի ինստիտուտը և Լրատվամիջոցների Կովկասյան ինստիտուտը: Նամակի ամբողջական տեքստը կարելի է կարդալ. http://www.osce.org/news/generate/pf.php3?news_id=3358

ԵԱՀԿ-ի, ոչ-կառավարական կազմակերպությունների և Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչությունների տեսակետներն ՀՀ-ում ընդունվեցին մեծ վերապահումներում: Մի կողմից, Ազգային ժողովի նախագահը պատասխանեց, որ կատարված առաջարկությունները հաշվի կառնվեն, սակայն մյուս կողմից Ազգային ժողովի նախագահի տեղակալ Տիգրան Թորոսյանը սկզբում մերժեց առաջարկված տեսակետները՝ դրանք համարելով «միջամտություն ՀՀ-ի ներքին գործերին»¹⁴: Իրականում, ԵԱՀԿ Մոսկվայում ընդունված փաստաթղթում, որին միացել է նաև Հայաստանը, երբ անդամագրվեց ԵԱՀԿ-ին՝ 1992 թվականին, պարզորոշ նշում է, որ ԵԱՀԿ-ի մասնակից երկրները «...հայտարարում են, որ ԵԱՀԿ մարդու իրավունքների վերաբերյալ պարտավորությունները, որոնք ընդունում են մասնակից երկրները, ուղղակիորեն համարվում են մասնակից երկրների մտահոգության առարկան և դրանք չեն պատկանում բացառապես տվյալ երկրի ներքին գործը»: Ինչևէ, Քրեական օրենսգրքի հեղինակներից մեկը՝ Մանվել Գրիգորյանը, իր պատասխանում նշեց, որ գրպարտությունը հանցանք է ԱՊՀ անդամ բոլոր երկրներում, ինչպես նաև Գերմանիայում:

2004 թվականին ԵՄ Խորհրդարանական վեհաժողովը, որը իրականացնում է Հայատանի՝ որպես ԵՄ անդամ երկիր իր պարտավորությունների կատարման մոնիտորինգի գործընթացը, վերջապես իր փաստաթղթերում անդրադարձավ գրպարտության քրեական նորմերին: Չնայած ԵՄ Խորհրդարանական վեհաժողովի 2004 թվականի սեպտեմբերի խորհրդարանական լսումներին նշվեց, որ չնայած «2004թ. հուլիսի 1-ին ՀՀ նախագահը ստորագրել է փաստաթուղթ Քրեական օրենսգրքում մի շարք փոփոխություններ կատարելու մասին, որով մասնակիորեն ապաքրեականացվել են գրպարտության և վիրավորանքի նորմերը», սակայն միևնույն ժամանակ ԵՄ-ն և ԵԱՀԿ-ն արտահայտեցին, որ իրենք վերապահումներով են մոտենում նշված փոփոխություններին, որոնցով քաղաքացիական ծառայողները առավելություն ունեն սովորական քաղաքացիների նկատմամբ: Ավելին, Խորհրդարանական վեհաժողովի 1405 Բանաձևում, որը կազմվել էր խորհրդարանական լսումների հիման վրա, ՀՀ կառավարությանը առաջարկություն արվեց՝

վերանայել ԵՄ փորձագետների համագործակցությամբ և, հաշվի առնելով, արդեն արված և դեռ արվելիք առաջարկությունները, Քրեական օրենսգրքի 135, 136 և 318 հոդվածները, որպեսզի գրպարտությունը և վիրավորանքը բանտարկության հանգեցնելու որևէ հնարավորություն բացառվի;¹⁵

Ինչպես նշվեց մասնակիորեն, նշված հոդվածների մի շարք դրույթներ խստորեն քննադատվեցին միջազգային հանրության կողմից: Առաջին, հոդվածները պատժատեսակների և պատժաչափերի լայն հնարավորություն են տալիս, որոնք տատանվում են տուգանքից մինչև երկու տարվա բանտարկություն: Երկրորդ,

¹⁴ Եվրոպային Ազատություն ռադիոկայանի լուրերը, 23 հունիս 2003 (www.rferl.org)

¹⁵ ԵՄ Խորհրդարանական վեհաժողովի փաստաթուղթ համ. 10286 ընդունված 2004թ. սեպտեմբերի 20-ին, որը վերաբերվում է Հայաստանի կողմից որպես ԵՄ անդամ երկրի պարտավորությունների կատարման վերաբերյալ համ. 1361(2004) և 1374 (2004) Բանաձևերին:

հողվածները տարբեր աստիճանի պաշտպանվածության հնարավորություն են տալիս սովորական քաղաքացիներին և պետական պաշտոնյաներին: Միայն քր.դատ.-ի 318 հողվածի առկայությունը արդեն լրջորեն վտանգում է խոսքի ազատությունը այն բոլոր դեպքերում, երբ քննադատական խոսք է հնչում «իշխանության ներկայացուցիչների հասցեին ոչ միայն լրագրողների կողմից, այլ նաև քաղաքական ակտիվիստների կողմից և որտեղ քննադատությունն արվել է հանրային միջոցառումների ընթացքում, ինչպես օրինակ՝ հանրահավաքների կամ երթերի: 2004 թվականի ապրիլ-հունիս ամիսների մասսայական ձերբակալությունների ժամանակ ՀՀ գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց «Արդարություն» դաշինքի նկատմամբ 318 հողվածի հիմքերով «դաշինքի անդամների և նրանց հարող անձանց կողմից հանրահավաքների ընթացքում պետական պաշտոնյաների հասցեին վիրավորական արտահայտություններ օգտագործելու համար »: Հաշվի առնելով, որ քրեական գործ հարուցվեց ոչ թե առանձին անհաների, այլ ինը կուսակցությունից բաղկացած դաշինքի նկատմամբ, ակնհայտ է դառնում 318 հողվածի վտանգավոր լինելը: Այս մեղադրանքների հիմքով մեծ թվով անձինք ձերբակալվեցին, իսկ որոշ անձինք ենթարկվեցին բանտարկության մինչև մեկ ու կես տարի ժամկետով:¹⁶ Միջազգային հանրությունը խստորեն քննադատեց նաև զրպարտության և վիրավորանքի մեղադրանքով բազմաթիվ մարդկանց քրեական մեղադրանք ներկայացնելու հետ կապված դեպքերը 2003 մարտից հունիս ընկած ժամանակաշրջանում:¹⁷ Ջրպարտության և վիրավորանքի նորմերի լայն կիրառման մասին պատրաստված հատուկ զեկույցում Մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունը ՀՀ կառավարությանը առաջարկեց «վերացնել զրպարտության քրեական նորմերը և ընդդիմության ներկայացուցիչների վրայից հանել զրպարտության հիմքով քրեական մեղադրանքները»:¹⁸

¹⁶ Տես. ՄԻԵԴ գանգառը ժռա Սապեյանն ընդդեմ Հայաստանի, դիմում համ. 35738/03.

¹⁷ Մարդու իրավունքների Պաշտպան կազմակերպության զեկույցը 2003թ. մայիսի 23-ին, վերնագրված. «Օրենքի իմիտացիան. վարչական կալանքի կիրառումը 2003թ. Նախագահական ընտրությունների ընթացքում»:

¹⁸ «Ռեպրեսիաների շրջապտույտը. Մարդու իրավունքների խախտումները Հայաստանում: Մարդու իրավունքների պաշտպան. 04/05/04, կետ 20: